

Ֆ.Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍԳՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ  
ԴԻԴԱԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

*Ուսումնական ձեռնարկ*



Երևան

*Հեղինակային հրատարակություն*

2009

ՀՏԴ 37.037.1:796/799 (07)

ՊՄԴ 75.1 ց73

Ղ 158

Ղազարյան Ֆրունզիկ Գ.

Ղ 158 Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դիդակտիկայի հիմունքները: Ուս. ձեռնարկ. - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2009.- 113 էջ

*Տպագրության է երաշխավորել Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի գիտական խորհուրդը*

Գրախոսներ՝

Մ.Ս.Մանուկյան **մանկավարժական գիտություն-**

**ների դոկտոր, պրոֆեսոր**

*Ա.Ա.Գրիգորյան* մանկավարժական գիտություն-

ների թեկնածու, պրոֆեսոր

Ձեռնարկում լուսաբանված են ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դիդակտիկայի հանգուցային հարցերը: Դիդակտիկան այստեղ դիտվում է որպես ուսուցման մանկավարժական տեսություն, նրա էությունը և առանձնահատկությունները ֆիզիկական դաստիարակության և սպորտի մանկավարժության ներքո: Ներկայացված են ֆիզկուլտուրային-մարզական պրակտիկայում այսօր կիրառվող ինովացիոն տեխնոլոգիաները և համակարգչային տեխնիկան: Ձեռնարկը հասցեագրված է ինստիտուտի մագիստրոսներին և կարող է օգտակար լինել նաև ֆիզկուլտուրայի ուսուցիչներին և մարզիչներին:

**ՊՄԴ 75.1 ց73**

ISBN 978-9939-53-298-1

© Ղազարյան Ֆ.Գ., 2009 թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դիդակտիկայի բովանդակության հիմնահարցերը մանկավարժական մյուս խնդիրների շարքում միշտ էլ եղել է առաջինը: Եվ դա հասկանալի է. մարդկությունը, իր զարգացման բոլոր փուլերում հարկ է եղել լուծել, թե ինչ և ինչպես սովորեցնել աճող սերնդին: Այդ խնդիրը առաջնակարգ դիրքը պահպանում է նաև մեր օրերում, ֆիզկուլտուրային բարձրագույն կրթության համակարգի վերակառուցման շրջանում: Ավելին, վերջին երկու տասնամյակներում նշանակալիորեն մեծացել է դիդակտիկայի, ուսուցման ընդհանուր տեսության մեթոդաբանական դերը:

Ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիներ փնտրում են աշխարհի բոլոր երկրներում: Հայաստանի Հանրապետությունում ուսուցման արդյունավետության խնդիրները ակտիվորեն մշակվում են հոգեբանության, տեղեկատվության, ճանաչողական գործունեության կառավարման տեսության վերջին նվաճումների օգտագործման հիման վրա:

Հիմա նշնարվում է հստակ անցումը դեպի ուսուցման մարդասիրական կերպը, այդ թվում նաև ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության բնագավառում:

Սպորտային մանկավարժության, ինչպես նաև ցանկացած գիտության մեջ կան բազմաթիվ վաղուց և միանշանակ լուծված հարցեր, սակայն կյանքը առաջ է քաշում նոր խնդիրներ, որոնք նոր մոտեցումներ են պահանջում: Առաջին հերթին դա վերաբերում է ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության դիդակտիկային:

Շատ ուսանողներ պատասխան են փնտրում այն հարցին, թե ինչպե՞ս դառնալ լավ մանկավարժ և ընտրած մարզածևում լավ մարզիչ, ի՞նչ է անհրաժեշտ ձեռնարկել իրենց

աշակերտների ուսուցման գործում բարձր արդյունքների հասնելու համար:

Որքան էլ բարդ է մանկավարժական ստեղծագործության բնագավառը, որքան էլ անվերջանալիորեն բազմազան են անհատական դեպքերը, որոնք ամեն անգամ իրենց լուծումն են պահանջում, չկա և գոյություն չի կարող ունենալ որևէ կասկած, որ այս բոլոր երևույթների ու գործընթացների հիման վրա ընկած են յուրահատուկ, բացարձակապես որոշակի օրենքներ, որոնց բացահայտումն էլ հանդիսանում է սպորտային մանկավարժության, որպես գիտության, խնդիրը:

Այդ իսկ պատճառով մագիստրատուրայի այսօրվա շրջանավարտները, որպեսզի կյանքում իրենց տեղն ունենան, պետք է տիրապետեն անհատի որոշակի որակներ, պետք է ճկուն ձևով հարմարվեն կյանքի փոփոխվող իրավիճակներին, ինքնուրույն ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ, տեսնել ռեալ կյանքում ծագող խնդիրները, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, գրագետ աշխատել տեղեկատվության հետ, տարբեր սոցիալական խմբերում լինել մարդամոտ, մշտապես բարձրացնել իր մասնագիտական որակավորումը:

Սույն հատուկ դասընթացը նախատեսված է այն մագիստրանտների համար, որոնք յուրացնում են «ֆիզիկական դաստիարակության տեսությունն ու տեխնոլոգիաները» կրթական ծրագիրը: Նոր ուսումնական դասընթացի ստեղծման գաղափարը պատահական չծնվեց: Այսօր դիդակտիկայի վրա, ինչպես երբեք, ընկած է հսկայական պատասխանատվություն երիտասարդ սերնդին ժամանակակից պահանջների ոգով դաստիարակելու համար: Այդ իսկ պատճառով թելադրվում է դիդակտիկայի օրինաչափությունների առավել խորը իմաստավորման անհրաժեշտություն, հատկապես կրթության մագիստրական մակարդակով:

Ձեռնարկը ստեղծվել է ֆիզիկական կուլտուրայի ապագա ուսուցիչների և մարզիչների մանկավարժական պրոֆեսիոնալիզմի զարգացման և ձևավորման օրինաչափությունների հաշվառմամբ:

Մենք հույս ունենք, որ ժամանակակից դիդակտիկայի խնդիրների ուղղությամբ խորը տեղեկացվածությունը մեր ուսանողներին թույլ կտա իմաստավորել այս կամ այն դիդակտիկական համակարգի, ուսուցման և կրթական ռազմավարության, ինքն իր վրա անհատականության և պրոֆեսիոնալ կայացման ճանապարհով տարվող աշխատանքի արդյունավետ միջոցների որոնումների արժանիքները:

# ԳԼՈՒԽ 1

## ԴԻՂԱԿՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### *1.1. Մանկավարժության մասին*

Մարդու կողմից ուսումնասիրվող բոլոր գիտելիքները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ բնական և հումանիտար (մարդասիրական):

**ԲՆԱԿԱՆ** գիտությունները (ֆիզիկա, մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, աշխարհագրություն և այլ) ուսումնասիրում են բնությունը և նրա օրենքները:

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ** գիտությունները (փիլիսոփայություն, պատմություն, մանկավարժություն, մշակութաբանություն և այլն) ուսումնասիրում են մարդուն և հասարակությանը: Երբեմն հումանիտար գիտությունները անվանում են սոցիալական, այսինքն գիտություններ հասարակարգերի, սոցիալական խավերի մասին (սոցիում):

Մանկավարժության՝ դաստիարակության, ուսուցման, կրթության հարցերը միշտ գրավել է տարբեր ժամանակների մտածողների ուշադրությունը: Պատահական չէ, որ տեսական մանկավարժական մտքի սկզբնաղբյուրները դեռևս եղել են հին փիլիսոփաների՝ Պլատոնի և Արիստոտելի աշխատանքներում: Նրանք ձևակերպել են տարիքային դասակարգման հիմունքները և բացահայտել մարդու դաստիարակության և կրթության փուլերը:

Ավելի ուշ մանկավարժությունը գիտության կարգավիճակ ստացավ շնորհիվ չեխ անվանի մանկավարժ Յա.Ա.Կոմենսկու (1592-1670) աշխատությունների: Նա իր մանկավարժական հիմնական գաղափարները շարադրեց «Մեծ դիդակտիկա» (1654) աշխատության մեջ, որը ստացավ համաշխարհային ճանաչում: Կարելի է հաստատել, որ արդեն 17-րդ

դարում մանկավարժությունը առանձնացավ որպես ինքնուրույն գիտություն:

Յա.Ա.Կամենսկու «Մեծ դիդակտիկան» սկիզբ դրեց ուսուցման գործընթացի մասին գիտությանը և իր ընկալումը գտավ ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության մեջ:

Քանի որ ուսուցման և դաստիարակության առարկան մարդն է, ապա մանկավարժությունը դասվում է մարդու մասին գիտությունների շարքին և որոշակի տեղ է զբաղեցնում մարդագիտության և հումանիտար գիտությունների համակարգերում:

**ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆԸ** անսովոր գիտություն է: Եվ ահա թե ինչու:

- Այն բարդ է, քանի որ ուսումնասիրում է մարդուն, իսկ մարդը շատ բարդ երևույթ է,
- այն հակասական է, դաստիարակության նույն հարցերը կարող են մեկնաբանվել տարբեր ձևով,
- այն անծայրածիր է, մարդու դաստիարակության խնդիրը միշտ եղել է, կա և կմնա,
- այն շատ հետաքրքիր է, քանզի սերտորեն կապված է մարդու հետ, նրա ճակատագրին, սխալներին, մոլորություններին, զարգացմանը...

Մանկավարժությունը գործունեության հատուկ տեսակ է: Նա, այդ գործունեությունը, նպատակամղված է, քանզի մանկավարժը իր առջև դնում է կոնկրետ խնդիրներ.

- սովորեցնել ինչ-որ բան (մեքենա վարել, կարդալ...),
- դաստիարակել ինչ-որ բան (կամք, բնավորություն...),
- զարգացնել (ուժը, արագաշարժությունը...):

Եվ այդ ամենը իրականացվում է մի սերնդից մյուսին փորձը փոխանցելու ձևով: Այդ փորձը հասարակական է, սոցիալական:

Երբեմն դա անվանում են մշակույթի «տրանսլացիա» (փոխհաղորդում):

Մանկավարժությունը *ամենահին* և *հավերժ* գիտություն է: Այն *ամենատաաջին* գիտությունն է երկրագնդի վրա: Դա բոլոր գիտությունների հանրահաշիվն է, քանի որ այն թափանցված է բոլոր գիտությունների մեջ: Նրա դիդակտիկական սկզբունքները, որոնք արդեն ավելի քան 350 տարեկան են, ընդհանուր են գիտությունների բոլոր տեսակների համար:

Մանկավարժությունը ծագել է մարդու հետ: Հին մարդիկ դաստիարակել են երեխաներին, մանկավարժության գոյության մասին անգամ պատկերացում չունենալով: Որպես գիտություն այն ձևավորվել է ավելի ուշ, երբ արդեն գոյություն ունեին այնպիսի գիտությունները, ինչպիսիք են փիլիսոփայությունը, երկրաչափությունը, աստղաբաշխությունը և ուրիշներ: Կարելի է ասել, որ մանկավարժական միտքը ծնունդ առավ փիլիսոփայության, քաղաքականության, կրոնի, ավելի ուշ՝ հոգեբանության ընդերքում:

Հարկ է իմանալ, որ սուրբ գրքերում՝ Աստվածաշնչում, Ղուրանում, Թալմուդում, արդեն շարադրված էին մարդու, ծնողների և երեխաների վարքի նորմերը ինչպես տանը, ընտանիքում, այնպես էլ հասարակության մեջ:

Կա մի հին ասացվածք. «Լավ մարդ դառնում են ավելի շուտ վարժություններով, քան բնությունից»: Դա խոսում է դաստիարակության նպատակաուղղվածության կարևորության մասին, որի կենտրոնում Մարդն է:

5-6-րդ դարերի հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթը գրել է, որ մարդը կենդանի էակ է, նա բանական է ու մահկանացու, տիրապետում է սովորելու, դաստիարակվելու, զարգանալու ընդունակության: Ավելի ուշ Յա.Ա.Կոմենսկին գրեթե կրկնել է, որ մարդու մեջ որպես ձիրք բովանդակված են բազմազան ընդունակություններ, որոնք բացահայտվում և կատարելագործվում են սովորելու, դաստիարակման և կրթություն


ստանալու ճանապարհով: «Մեծ դիդակտիկայուն» նա գրում է. «Մարդը պետք է սովորի, որպեսզի դառնա այն, ինչ պետք է լինի»:

Իր ժամանակին ռուս մտածող և մանկավարժ Կ.Գ.Ուշինսկին (1824-1870), մշակելով մանկավարժական մարդաբանության խնդիրները, արդարացիորեն ասում էր. «Եթե մանկավարժությունը ցանկանում է մարդուն դաստիարակել բոլոր կողմերով, ապա այն նախ և առաջ պետք է մարդուն ճանաչի բոլոր կողմերով»:

Ուսուցման, դաստիարակության և զարգացման արդյունքում տեղի է ունենում անհատի կրթություն, այսինքն նրա կայացումը և ձևավորումը (նկ. 1): Կրթության մեջ առաջատար գործունեություն հանդիսանում է ուսումնականը, այսինքն ուսուցումը:

## *1.2. Ինչ է դիդակտիկան*

**ԱԿՈՒՆՔՆԵՐԸ:** Մարդու կյանքում սովորելը միշտ էլ բացառիկ դեր է խաղացել: Այդպես է եղել այն ժամանակ, երբ կրել է պատահական կռահողական բնույթ և գլխավորապես հանգել է ինֆորմացիայի պատահական փոխանցման և ընդօրինակման: Այդպես է եղել նաև հետո, երբ ուսուցումը վերածվել է նպատակամղված, պարբերական և համաչափ գործընթացի, ինչը կապված է դպրոցի ծագման հետ: Սակայն դեռևս երկար ժամանակամիջոց ուսուցումը չի եղել տեսական վերլուծության և հատուկ հետազոտման առարկա, ինչի պատճառով էլ չի ունեցել իր տեսանկյունը: Միայն 17-րդ դարում այստեղ ներմուծվեցին կարևոր փոփոխություններ, երբ ուսուցման տեսությունը ստացավ հատուկ անուն և պատմության մեջ առաջին անգամ դրվեցին դիդակտիկական գործունեության գիտականորեն հիմնավորված համակարգի հիմքերը:



**Նկար 1. Ուսուցման, զարգացման և դաստիարակության փոխկապվածությունը որպես կրթության բաղադրամասեր**

Այսօր ուսուցման, դաստիարակության և կրթության, ինչպես նաև մարդկությանը սննդամթերքով, էներգիայով ապահովման, երկրագնդի վրա խաղաղության, շրջակա միջավայրի պահպանման խնդիրները պատկանում են առավել նշանակալից, գլոբալ խնդիրների թվին: Եվ պատահական չէ, որ միջազգային մակարդակով առաջ է քաշված «Սովորել, որպեսզի գոյություն ունենալ» նշանաբանը: Դա անընդհատ ուսուցման մասին (no limits to learning) մանկավարժության առջև լուրջ խնդիրներ է դնում: Հենց այդ հարցերով է զբաղվում դիդակտիկան՝ ուսուցման տեսությունը:

Պատմականորեն ստացվել էր այնպես, որ «մանկավարժություն» տերմինի կողքին, նույն իմաստով, օգտագործվում էր նաև «դիդակտիկա» տերմինը: Այն առաջին անգամ գիտական շրջանառության մտցրեց գերմանացի մանկավարժ Վոլֆգանգ Ռատկեն (1571-1635) 1613 թվականին: Դիդակտիկայի անվան տակ նա հասկանում էր գիտական առարկա, որը զբաղվում է ուսուցման տեսությամբ և պրակտիկայով: 40 տարի անց այդ տեսակետը պաշտպանեց Յա.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկայում»:

Փոքր-ինչ ուշ հայտնվեցին Ա.Գ.Նիմեյերի (1751-1828) «Դաստիարակման և ուսուցման հիմնական սկզբունքները»

(1796) և «Մանկավարժության և դիդակտիկայի առաջատար դրույթները» (1802) անչափ հետաքրքիր մենագրությունները:

Խոսելով ուսուցման մասին, գերմանացի մանկավարժ Վոլֆգանգ Ռատկեն ասում էր. «Երեխայի խելքը մաքուր տախտակ է, որի վրա ուսուցման գործընթացում կարելի է գրել ինչ ցանկանաս»: Ավելի ուշ անգլիացի փիլիսոփա և մանկավարժ Դ.Լոքը (1632-1704) առաջ քաշեց «*tabula-rasa*» (լատ.) նշանաբանը. «Չոգին մի սպիտակ թուղթ է առանց որևէ նշանի ու գաղափարի, ինչը վկայում է ուսուցման և դաստիարակության մեծ ուժի մասին»:

Մանկավարժական գիտության զարգացմանը համաչափ դիդակտիկան իր ուշադրությունը սկսում է կենտրոնացնել ուսուցման և կրթության տեսության հարցերի վրա: Համաշխարհային դիդակտիկայի զարգացման մեջ նշանակալի ներդրում ունեցան Ի.Ֆ.Յերբարտը (1776-1841), Ի.Գ.Պաստալոցին (1746-1827), Ա.Դիստերվեզը (1790-1816), Կ.Դ.Ուլշինսկին (1824-1870) և ուրիշները:

Ուսուցման, դիդակտիկայի առարկայի և օբյեկտի սահմանման, ուսուցման մեթոդների գիտական հիմնավորումներում էական ներդրում ունեցան նաև ռուս ժամանակակից մանկավարժներ և հոգեբաններ՝ Ի.Յա.Լերները, Վ.Կ.Դյաչենկոն, Մ.Ի.Մախնոտովը, Պ.Ի.Պիդկասիստին և այլք:

Ուսուցման ձևավորող և զարգացնող նշանակության մասին էր խոսում Ն.Ջորայանը (1821-1859), ով հիմնավորեց դիդակտիկայի հիմունքները և մշակեց դպրոցական ծրագրեր: Ուսուցման սկզբունքների՝ մատչելիության, գիտակցականության, ակտիվության, զննականության, պարզից դեպի բարդը հիմնավորման մեջ լուրջ ներդրում ունեցան հայ մանկավարժներ Խ.Աբովյանը (1805-1848), Ղ.Աղայանը (1840-1911), Ն.Տեր-Ղևոնդյանը (1848-1920), Հ.Ալամդարյանը (1795-1834) և ուրիշները: Ուսուցման ընթացքում նրանք կարևոր նշանակություն էին տալիս տարիքային առանձնահատկու-


թյուններին և ժառանգական նշաններին (Յ.Երզնկացին, 1250-1326, Խ.Արոյանը 1805-1848, Ղ.Աղայանը, 1840-1911, Վ.Չերազը, 1886-1927, Յ.Խինդյանը, 1865-1911) և ուրիշներ:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի դիդակտիկայի հարցերի մշակման բնագավառում ուշագրավ են Վ.Վ.Բելինովիչի, Ա.Ի.Դիկունովի, Մ.Մ.Բոգենի, Ա.Ա.Տեր-Յովհաննիսյանի, Լ.Պ.Մատվեևի և այլոց ուսումնասիրությունները:

**ԴԻԴԱԿՏԻԿԱՅԻ ԷՆԹՅՈՒՆԸ:** Իր ծագումով «դիդակտիկա» տերմինը պատկանում է հունարեն լեզվին, որտեղ «didaktikos» նշանակում է սովորեցնող, ուսուցանող, իսկ «didasko»՝ սովորող, ուսուցանվող:

Ի՞նչ է ուսուցումը որպես մանկավարժական գործընթաց: Ի՞նչում է կայանում նրա էությունը: Երբ բացահայտում են այն հարցերը, ապա նախ և առաջ նշում են, որ այդ գործընթացը բնորոշվում է երկկողմանիությամբ: Մի կողմից հանդես է գալիս սովորեցնողը, այսինքն՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչը և մարզիչը, որը շարադրում է ծրագրային նյութը և ղեկավարում է այդ գործընթացը, իսկ մյուս կողմից սովորողն է (դպրոցականը, մարզիկը), ում համար տվյալ գործընթացը ընդունում է ուսման, ուսումնասիրվող նյութը տիրապետելու բնույթ: Հետևաբար, դա սովորեցնողի ու սովորողի միջև ակտիվ համագործակցության գործընթաց է:

Այդ իսկ պատճառով կարելի է նշել, որ ուսուցումը ոչ այլ ինչ է, քան կիբերնետիկական երկկողմանի կառավարման գործընթաց (նկ. 2):



**Նկ. 2. Ուսուցումը որպես կառավարվող կիբերնետիկ գործընթաց**

Այս կապակցությամբ մեծ փիլիսոփա Ի.Կանտը (1724-1804) ասում էր. «Մարդկության գլխավոր հայտնագործություններն են՝ դաստիարակելու արվեստը և ղեկավարելու արվեստը»:

Այսպիսով, դասավանդումը և ուսուցումը դիդակտիկ գործընթացներ են, որոնք կապված են երկու գլխավոր դեմքերի՝ սովորեցնողի ու սովորողի, այլ կերպ ասած՝ ուսուցիչների-մարզիչների և նրանց աշակերտների գործունեության հետ: Այլ ձևակերպմամբ, «դասավանդում» և «ուսուցում» հասկացությունները բնութագրում են այն անձանց գործունեության գլխավոր ձևերը, ովքեր անմիջականորեն մասնակցում են ուսուցման գործընթացին:

Այդ իսկ պատճառով ուսուցումն ընդհանրապես և ֆիզիկական դաստիարակության ու սպորտային մարզման ոլորտում մասնավորապես, հանդիսանում է դաստիարակության հասարակական երևույթի միջուկը: Այն միշտ եղել է ու գոյություն ունի մեծահասակների ու երեխաների միջև փոխհարաբերության ռեալ պրակտիկայում: Ուսուցումը կոչված է ապահովել երեխայի հարմարվողականությունը իրականությանը, կողմնորոշել նրան կյանքի բազմապիսի պայմաններում և իրավիճակներում, նախապատրաստել գործունեության տարբեր տեսակների:

Ուսուցումը հանդիսանում է մարդու կենսականորեն կարևոր և անհրաժեշտ պահանջմունք, նա պետք է սովորի, որպեսզի կարողանա կառավարել սեփական կյանքը: Որքան սահմանափակ է նրա ընդունակությունը ուսման մեջ, այնքան սահմանափակ են նրա հնարավորությունները՝ ձևավորելու իր գոյությունը:

Ուսուցումը որպես հասարակական երևույթ հանդիսանում է ավագի կողմից հասարակական հարաբերությունների փորձի նպատակամղված, կազմակերպված և պարբերաբար փոխանցում և աճող սերնդի կողմից հասարակական

ճանաչման, մշակույթի, գիտության, արվեստի, ֆիզիկական դաստիարակության, սպորտի և այլնի յուրացում:

Դիդակտիկան հանդիսանում է մանկավարժական տեսության ինքնուրույն մաս, որտեղ բացահայտվում են ուսուցման գործընթացի ընդհանուր օրինաչափությունները:

Այստեղ լուսաբանվում են կրթության կազմակերպման ընդհանուր հարցերը նրա բովանդակությունը, ուսուցման մեթոդներն ու ձևերը, այսինքն այն բոլոր կատեգորիաները, որոնք վերաբերում են աճող սերնդի և մեծահասակ մարդկանց կրթությանն ու ուսուցմանը:

Ուսուցման գործընթացում պարապրոզները յուրացնում են մարդկության հասարակական-պատմական փորձի որոշակի կողմերը՝ գաղափարախոսությունը, քաղաքականությունը, գիտությունը, բարոյականությունը, արվեստը, ֆիզիկական կուլտուրան, սպորտը և այլն:

Այստեղից էլ դիդակտիկան, ինչպես և ցանկացած այլ առարկա, նախ և առաջ գիտաուսումնական առարկա է: Այն կոչված է զբաղվել այնպիսի մեթոդաբանական խնդիրների լուծմամբ, որոնք ընդհանրապես ծագում են այն դեպքում, եթե անհրաժեշտ է տեսական կառուցվածքը, որը զոյացել է հետազոտման արդյունքում, ձևափոխել ուսումնական առարկայի:

Արդի ժամանակում դիդակտիկան ուշադրությունը կենտրոնացնում է ուսուցման տեսության խնդիրների մշակման վրա: Դիդակտիկայում դաստիարակության խնդիրները ինքնուրույն չեն դիտարկվում, թեև ոչ ուսուցումը, ոչ էլ կրթությունը առանց դաստիարակության գոյություն չունեն:

Այստեղից հետևում է, որ դիդակտիկան ուսուցման մանկավարժական տեսություն է, որը տալիս է նրա բովանդակության, մեթոդների ու կազմակերպչական ձևերի գիտական հիմնավորումը (Պ.Ի.Պիդկասիստի): Մոտավորապես համանման սահմանումներ գոյություն ունեն նաև այլ հեղինակների

մոտ (Ի.Պ.Պողևասի, Վ.Ի.Անդրեան, Լ.Պ.Կրիվչենկո, Գ.Ս.Մախչանյան):

Ինչպես և Վ.Ռատկեի և Յա.Ա.Կամենսկու ժամանակներում, այսօր էլ դիդակտիկան զբաղվում է հետևյալ խնդիրների մշակմամբ.

- ինչի՞ համար սովորեցնել (ուսուցման, կրթության նպատակները),

- ո՞ւմ սովորեցնել (ուսուցման սուբյեկտները),

- ի՞նչ սովորեցնել (ուսուցման, կրթության բովանդակությունը),

- ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդները),

- ինչպե՞ս կազմակերպել ուսուցումը (կազմակերպման ձևերը),

- ուսուցման ինչպիսի՞ միջոցներ են անհրաժեշտ (ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, համակարգչային ծրագրեր և այլն),

- ինչի՞ կարելի է հասնել ուսուցման արդյունքում (ցուցանիշներն ու չափանիշները, ուսուցմանը բնորոշ արդյունքները),

- ինչպե՞ս վերահսկել և գնահատել ուսուցման արդյունքները (վերահսկման մեթոդները և ուսուցման արդյունքների գնահատականը):

Չետևաբար, դիդակտիկան հիմնավորում է կրթության նպատակը, խնդիրները, սկզբունքները, միջոցները, մեթոդները, կազմակերպման ձևերն ու բովանդակությունը: Բոլոր այս կառուցվածքային բաղադրիչները կազմում են դիդակտիկայի առարկան որպես գիտություն:

Այսօրվա հասկացությամբ ուսուցման համար ընդհանրապես բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- երկկողմանի բնույթը (կիբերնետիկական գործընթաց),

- սովորեցնողի և սովորողի համատեղ գործունեությունը,

- ուսուցիչ-մարզչի ղեկավար դերը,

- ուսուցման գործընթացի պլանաչափ կազմակերպումը,

- սովորողների տարիքասեռական յուրահատկությունների հաշվարկը,

- ուսուցման ընթացքի խիստ հսկողությունը (մանկավարժական թեստավորում, քննություններ և այլն),

- սովորողների զարգացման և դաստիարակության կառավարումը:

Դրանցից բացի դիդակտիկայում առանձնանում են երեք յուրահատուկ ֆունկցիաներ: Առաջինը դա *կրթականն* է (գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձևավորում), երկրորդ՝ *զարգացնող* (ուսուցման գործընթացում տեղի են ունենում խոսքի, մտածողության, բանականության, շարժողական ոլորտի և այլնի զարգացում) և, երրորդ՝ *դաստիարակչական* (ձևավորվում են բարոյական և գեղագիտական պատկերացումները, աշխարհայացքը, կենսական ակտիվ դիրքը, պահանջունքները, արժեքները և այլն):

Յետաքրքիր են ուսուցման աստիճաններին վերաբերող տեղեկությունները: Դեռևս Վ.Ռատկեն (1571-1635) և Օ.Վիլմանը (1839-1920) գտնում էին, որ ուսուցման ճանաչողական գործընթացը բաղկացած է առարկաների ըմբռնումից, դրանց հասկացությամբ և իմաստավորմամբ, իսկ հետո էլ մտավոր վերամշակմամբ և այն գործնական կիրառմամբ:

Մտավորապես ուսուցման նմանօրինակ աստիճաններ է տարբերակում ամերիկացի մանկավարժ Ա.Ռայդիեդը (1861-1947).

- ռոմանտիկայի (տեղեկության ստացում, ուսուցման առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացում),

- ճշգրտություն (տեխնիկայի, վարպետության տիրապետում),

- ստացված գիտելիքների ընդհանրացում:

Կարելի է եզրահանգել, որ ուսուցումը եռակի առումով զարգացման դիալեկտիկական գործընթաց է.

- որպես հասարակական գործընթաց (բնորոշ է բոլոր հասարակական ֆորմացիաների համար),

- որպես մանկավարժական գործընթաց (մարդկային գործունեության բնագավառներում կարողությունների ու հմտությունների ուսուցում),

- որպես զարգացման դիդակտիկական գործընթաց (ավելի ճիշտ, հենց իր՝ դիդակտիկական գործընթացի զարգացում):

Այսպիսով, ուսուցումը անհատի վրա ունի զարգացման և ձևավորման ազդեցություն, որի արդյունքում սովորողը.

- յուրացնում է տեսությունը (կանոնները, հասկացությունները, օրենքները և այլն),

- նրա մոտ ձևավորվում են կարողություններն ու հմտությունները,

- նա սովորում է դրանք կիրառել պրակտիկայում:

Ուսուցման հաջողությունը կախված է պայմանների առկայությունից, որոնք անհրաժեշտ են ուսումնական ծրագրի յուրացման համար: Դրա հետ մեկտեղ հարկ է նկատի ունենալ պատրաստականությունը. ուսուցչի, ուսուցանվողի և պայմանների, որոնցում իրականացվում է ուսուցումը:

Ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության պրակտիկայում ուսուցման հաջողությունը պայմանավորված է նաև մի շարք անհրաժեշտ նախադրյալներից.

- սովորողների շարժողական պատրաստվածության բավարար մակարդակ (մկանային ուժի, դիմացկունության, ճարպկության, արագաշարժության և այլնի),

- նոր շարժողական գործողությանը տիրապետելու ունակություն և արագություն, տարբեր բնույթի վարժությունների կատարման փորձի առկայություն,

- սովորողների շարժողական գործունեության կոնկրետ տեսակի տիրապետման մեջ հոգեկան մոտիվացիայի և պահանջմունքի աստիճանը:

Կարևոր է նաև իմանալ, որ դիդակտիկան որպես ուսուցման գործընթաց, չի կարող ունենալ սահմանափակ ժամկետներ: Այն արտացոլում է անընդհատ ուսուցման և կրթության ապահովման ժամանակակից միտումները, սկսած նախադպրոցական տարիքից և ավարտած մեծահասակ բնակչությանը: Այդ իսկ պատճառով դիդակտիկական գործընթացները ադապտացված են, հարմարված են մարդկային գիտելիքների բոլոր ճյուղերին՝ գիտությանը, տեխնիկային, արվեստին, ֆիզիկական կուլտուրային, սպորտին և այլն:

Հարկ է տարբերել ընդհանուր և մասնակի դիդակտիկաներ:

***Ընդհանուր*** դիդակտիկան ուսումնասիրում է հենց ուսուցման գործընթացը, նրա օրինաչափությունները, որոշում է մեթոդները, կազմակերպչական միջոցները, որոնք ապահովում են պլանավորված խնդիրների իրականացումը:

Երկար ժամանակ դիդակտիկան եղել է մանկավարժական միակ առարկան, որը ուսումնասիրել է ուսուցման տեսությունն ու մեթոդիկան ընդհանրապես: Սակայն հետագայում բացահայտվեց, որ այն ի վիճակի չէ բացահայտել յուրաքանչյուր առանձին առարկայի ուսումնական աշխատանքի յուրահատկությունը: Պատճառն այստեղ նրանում է, որ, օրինակ, մաթեմատիկայի կամ գրականության ուսուցումը կտրուկ տարբերվում է: Սա հանգեցրեց այն բանին, որ ընդհանուր դիդակտիկայից առանձնացան և ձևավորվեցին հատուկ մանկավարժական առարկաներ, որոնք սկսեցին անվանվել մասնակի մեթոդներ:

**Մասնակի** դիդակտիկաները ուսումնասիրում են ուսուցման գործընթացի օրինաչափությունները, բովանդակությունը, տարբեր ուսումնական առարկաների դասավանդման ձևերն ու մեթոդները: Մասնակի դիդակտիկաները ընդունված է անվանել դասավանդման մեթոդիկաներ, օրինակ, «Ֆիզիկայի դասավանդման տեսություն և մեթոդիկա», «Ըմբռամարտի դասավանդման տեսություն և մեթոդիկա» և այլն:

### ***1.3. Ուսուցման մեթոդական հիմունքները***

#### ***1.3.1. Ուսուցման օրինաչափությունները***

Մանկավարժական օրինաչափությունների, ուսուցման սկզբունքների ու մեթոդների խնդիրը գիտության մեջ հանդիսանում է առավել հրատապներից մեկը: Սա բազմիցս քննարկվել է տարբեր երկրների գրականության մեջ, սակայն միշտ չէ, որ այստեղ նկատվում են նույնական կարծիքներ: Բայց և այնպես մասնագետները ինչ-որ չափով փորձում են գալ ընդհանուր մտքի:

Այսօր ընդունված է համարել, որ ուսուցման օրինաչափությունները ուսուցման գործընթացի կազմածո մասերի ու բաղադրիչների միջև կայուն կրկնվող կապերն են:

Նախնադարյան հասարակությունում մարդկությունը հետզհետե կուտակում էր սերնդին ուսուցանելու գործնական գիտելիքներ: Այստեղ ուսուցման գլխավոր օրենքը չափահաս մարդկանցից փորձի ժառանգականությունն էր:

Հին աշխարհում ուսուցման հիմնական օրենքը հանդիսանում էր կալոկագաթիան՝ ֆիզիկական և մտավոր դաստիարակության կապը: Այս առնչությամբ անտիկ փիլիսոփա Սոկրատեսը արդարացիորեն ասում էր, որ ուսուցչի կոչումն է օգնել իր աշակերտի գլխում մտքի ծննդին:

Միջին դարերը եղել են մանկավարժական մտքի զարգացման դժվարին շրջանը, երբ իշխում էին ճգնավորների

ամեղծվածային պատկերացումներն ու եկեղեցական կանոնադրությունները:

18-րդ դարում մանկավարժության մեջ գերիշխող դարձավ կենսաբանությունը, հայտնվեցին Յա.Ա.Կոմենսկու ուսուցման առաջին սկզբունքները, Ի.Գ.Պետալոցցին ձևակերպեց մտավոր զարգացման օրենքները, ի հայտ եկավ էքսպերիմենտալ (փորձառական) մանկավարժությունը: 19-րդ դարում փորձեր արվեցին ձևավորել ուսուցման օրենքները: Այսպես, Է.Մեյմանը սահմանեց ուսուցման երեք օրենք. առաջին՝ մարդու զարգացումը որոշվում է բնական տվյալներով, երկրորդ՝ առաջին հերթին զարգանում են այն ֆունկցիաները, որոնք ապահովում են մարդու շարժառիթներն ու պահանջումները և երրորդ՝ հաստատում է հոգեկան և ֆիզիկական զարգացման անհամաչափությունը:

Հետագայում ձևակերպվեցին ուսուցման մանկավարժական այլ օրենքներ. մարզման օրենքը, պատասխան ռեակցիայի օրենքը, կրկնության օրենքը, ուսուցման արդյունավետության օրենքը և այլն (Է.Տորնդայք, Ս.Շաքլի, Կ.Հալլ և ուրիշներ): Մասնավորապես, մարզման օրենքը նշանակում էր, որ որքան բարձր է լարվածությունը, այնքան լավ է յուրացվում հետադարձ ռեակցիան:

Տեսաբանների և գործնական մարդկանց կողմից առանձնացվել են մեծ քանակությամբ դիդակտիկական օրինաչափություններ: Այսպես, Ի.Պ.Պոդլասին (1999) բերում է ուսուցման 70 տարբեր օրինաչափություններ:

Ներկայումս մասնագետները տարբերակում են ընդհանուր և մասնակի (կոնկրետ) օրինաչափություններ:

***Ընդհանուր*** օրինաչափություններին վերագրվում են.

- ուսուցման նպատակի օրինաչափությունները,
- ուսուցման բովանդակության օրինաչափությունները,
- ուսուցման որակի օրինաչափությունները,

- ուսուցման մեթոդների օրինաչափությունները,
- ուսուցման կառավարման օրինաչափությունները:

Ուսուցման *մասնակի* կամ կոնկրետ օրինաչափություններին են վերաբերվում.

- դիդակտիկ (ուսուցման արդյունքները կախված են կիրառվող միջոցներից ու մեթոդներից, սովորեցնողի վարպետությունից և այլն),

- գնոսեոլոգիական (ճանաչողական) ուսուցման արդյունքները կախված են սովորողների ճանաչողական ակտիվությունից, միտումներից և պահանջմունքներից,


- հոգեբանական (ուսուցման արդյունքները կախված են աշակերտների ուսումնառության հնարավորություններից, ուշադրությունից, հիշողությունից, մտածողությունից),

- կազմակերպչական (ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված է այն բանից, թե ինչպես է կազմակերպվում բուն ուսուցման գործընթացը, արդյոք պատճառում է բավարարվածություն, արդյոք խթանում է սովորողների ճանաչողական գործունեությանը և այլն),

- սոցիոլոգիական (ուսուցման արդյունքները կախված են սովորողների շփման աստիճանից, մտավոր միջավայրից, սովորեցնողների փոխհարաբերություններից սովորողների հետ և այլն):

Ուսուցման օրինաչափությունները առավել պատկերավոր բնութագրում է նկար 3-ը:

Ուսուցման այս օրինաչափություններին իմացությունը և նրանց հաշվարկը նպաստում են ուսումնական գործընթացի լավատեսությանն ու արդյունավետությանը:



**Նկար 3. Ուսուցման ընդհանուր օրինաչափությունների բնութագրումը**

### **1.3.2. Ուսուցման սկզբունքները**

Մանկավարժությունում ընդունված է համարել, որ ուսուցման սկզբունքները ղեկավարման նորմատիվային պահանջներ են, որոնք նպաստում են դիդակտիկական գործընթացի հաջող կազմակերպմանը: Սկզբունքները կրում են ամենաընդհանուր ցուցումներ, կանոններ, նորմեր, որոնք կարգավորում են ուսուցման գործընթացը:

Դիդակտիկայի պատմությունը վկայում է այն մասին, որ վերջին 350 տարիների ընթացքում ուսուցման սկզբունքների հարցերը եղել են քննարկումների և վեճերի ուշադրության առարկա:

Ուսուցման սկզբունքների խնդիրները միշտ էլ զբաղեցրել են ամբողջ աշխարհի անվանի մանկավարժների մտքերը: Բայց և այնպես այսօր էլ այն իր վերջնական լուծումը չի ստացել: Մինևույն ժամանակ արդի դիդակտիկայում կայուն մի կարծիք կա, որ ուսուցման սկզբունքները պատմականորեն կոնկրետ են և արտացոլում են հասարակական պահանջները: Սոցիալական առաջընթացի և գիտական նվաճումների ազդեցության տակ ուսուցման սկզբունքները ձևափոխվում և կատարելագործվում են: Այդ իսկ պատճառով մասնագետների կարծիքները դիդակտիկական սկզբունքների քանակի ու կազմի վերաբերյալ նույնական չեն: Այսպես, օրինակ, Ի.Պ.Պոդլասին և Լ.Պ.Կրիվչենկոն տարբերում են ուսուցման 7 սկզբունքներ, Ի.Ֆ.Խարլամովը և Գ.Ե.Ղույունչյանը՝ 8, Պ.Ի.Պիդկասիստին՝ 9 և այլն: Ինչ վերաբերում է սպորտային մանկավարժներին, ապա Ֆ.Գ.Ղազարյանը և Ա.Ա.Գրիգորյանը ուշադրությունը կենտրոնացնում են ուսուցման 6 սկզբունքների վրա, Ա.Ա.Տեր-Յովհաննիսյանն ու Լ.Պ.Մատվեևը՝ 7, Մ.Մ.Բոգենը՝ 9 և այլն:

Դասական դիդակտիկայում առավել ճանաչված են համարվում հետևյալ՝ գիտականության, մտաչելիության, գիտակցականության և ակտիվության, զննականության, սիստեմայնության, կայունության, դաստիարակող ուսուցման, պրակտիկայի հետ տեսության կապի, ուսուցանվողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հետ ուսուցման համապատասխանության և ուսուցման գործընթացում դասավանդողի առաջատար դերի դիդակտիկական սկզբունքները: Այս սկզբունքների բնութագիրը բավականին մանրամասն նկարագրված է համապատասխան ձեռնարկ-

ներում, այնպես որ նկարագրության անհրաժեշտություն չենք գտնում:

Միևնույն ժամանակ որպես դիդակտիկայի հիմնարար սկզբունքներ առաջ են քաշվում հետևյալները:

• ***Ուսուցման սոցիալական պայմանավորվածության և գիտականության սկզբունքը:*** Այս սկզբունքի էությունը նրանում է, որ ուսուցումը պետք է համապատասխանի տվյալ երկրի կրթական հայացքների համակարգին, անհրաժեշտ կադրերի պատրաստման յուրահատկությանը: Դեռևս Ֆ.Բեկոնը (1561-1626) ասում էր, որ յուրաքանչյուր երկրի ճակատագիրը կախված է այն բանից, թե ինչպիսի կրթություն են ստանում նրա քաղաքացիները: Ուսուցման գիտականությունը պահանջում է, որպեսզի ուսումնասիրման համար ուսումնական նյութը համապատասխանի կոնկրետ ուսումնական առարկայի գիտական փաստերին, տեսություններին, օրենքներին և տերմինաբանությանը:

• ***Գործնական պատրաստության ուղղվածության սկզբունքը:*** Սա նշանակում է, որ ուսուցումը պետք է ուղղված լինի կոնկրետ բնագավառում անհրաժեշտ գործնական հմտությունների ձեռք բերմանը (աշխատել համակարգչի վրա, ճիշտ կատարել զանազան շարժողական գործողությունները և այլն), մասնագետների աշխատանքի առաջավոր փորձի օգտագործում, տեսության և պրակտիկայի միջև սերտ կապ:

• ***Գիտակցականության և ակտիվության սկզբունքը:*** Այն կանխատեսում է սովորողների ակտիվ մտտիվացիա: Դա ժամանակակից դիդակտիկայի գլխավոր սկզբունքներից մեկն է, ինչի համաձայն ուսուցումը արդյունավետ է այն ժամանակ, երբ աշակերտները դրսևորում են ճանաչողական ակտիվություն: Այդ իսկ պատճառով ուսուցման գործընթացում պետք է հենվել պարապողների հետաքրքրությունների ու միտումների վրա, օգտագործել դիդակտիկական խաղեր, խնդրառու պորբլեմային իրավիճակներ, ուսուցման կոլեկտիվ ձևեր:

• ***Սիստեմայնության և հաջողականության սկզբունքը:***

Այն սահմանում է ուսումնական գործունեության համակարգային բնույթը, որոշակի հերթականությամբ գիտելիքների ու հմտությունների ձեռք բերումը: Այդ սկզբունքի իրականացման համար առաջարկվում է հայտնի դիդակտիկական կանոնների կիրառում. «հայտնիից՝ անհայտին», «հեշտից՝ դժվարին», «պարզից՝ բարդին»: Այստեղ էական դեր պետք է հատկացվի սովորողների գիտելիքների և կարողությունների ստուգմանն ու գնահատմանը:

• ***Ուսուցման մատչելիության սկզբունքը:***

Այս սկզբունքը արտացոլում է տարիքասեռական առանձնահատկությունների, ուսուցանվողների շարժողական պատրաստվածության մակարդակի խիստ հաշվարկի անհրաժեշտությունը: Ուսումնական նյութը մնացյալ բոլոր այլ պայմաններում կյուրացվի միայն այն դեպքում, եթե այն մատչելի է սովորողներին: Ահա թե ինչու այստեղ էլ պետք է օգտագործել վերում նշված դիդակտիկական կանոնները: Կարևոր է իմանալ, որ տվյալ տարիքին, սեռին և ուսուցանվողների պատրաստվածությանը մակարդակի համար ուժից վեր ուսումնական նյութը շատ արագ հանգեցնում է հոգնածության, նվազեցնում է ուսման մոտիվացիոն տրամադրվածությունը, աշխատունակությունը: Մինևույն ժամանակ ուսումնական նյութի ավելորդ պարզեցումը կարող է հանգեցնել կոնկրետ առարկայի, ֆիզիկական վարժության ուսուցման նկատմամբ հետաքրքրության նվազեցման:

• ***Զննականության սկզբունքը:***

Այս սկզբունքի եությունը կայանում է նրանում, որ ուսուցման արդյունավետությունը կախված է ուսումնական նյութի ընկալմանն ու մշակմանը զգայական օրգանների նպատակահարմարորեն մասնակցությունից: Հայտնի մանկավարժները վերջինս անվանում են «դիդակտիկայի ոսկե կանոն»:

• **Կայունության սկզբունքը:** Տվյալ սկզբունքը արտացոլում է ուսուցման այն առանձնահատկությունը, որին համապատասխան գիտելիքների, կարողությունների ու հմտությունների տիրապետմանը հասնում են, երբ դրանք հիմնավորապես ըմբռնված են, յուրացված և պահպանվում են հիշողության մեջ և շարժուններում: Ուստի անհրաժեշտ է ուսուցման գործընթացում վարժությունների քանակը, դրանց կրկնությունը, պարբերականությունը կազմակերպել ճիշտ, խստորեն հաշվի առնել անհատական առանձնահատկությունները:

• **Ուսուցման կապը ժողովրդավարական հասարակարգի կառուցման պրակտիկայի հետ սկզբունքը:** Այս սկզբունքը նախատեսում է, որպեսզի սովորողներին դրդի ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները օգտագործեն կոնկրետ բնագավառում կամ գործունեությունում, գործնական խնդիրների լուծման մեջ: Այդ սկզբունքի իրացման կարևորագույն ուղիներից մեկն է հանդիսանում սովորողներին հասարակական օգտակար գործունեության մեջ ակտիվորեն ներգրավումը, օրինակ, դասերի կոնսպեկտների, մարզումների պլանների կազմում, մրցումներում դատավարություն և այլն:

• **Ձարգացնող և դաստիարակող ուսուցման սկզբունքը:** Այն ամբողջությամբ ուղղված է անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը և արտացոլում է ուսուցման գործընթացի օրինաչափ անաչառությունը: Չի կարող լինել ուսուցում առանց զարգացման և դաստիարակության, և հակառակը: Սա նշանակում է, որ ուսուցման գործընթացում իրացվում են և զարգացման, և դաստիարակչական խնդիրներ և դրանք իրականացվում են միասնաբար:

• **Ուսուցման դիֆերենցված և անհատականացված մոտեցման սկզբունքը:** Այստեղ գլխավոր պայման է հանդիսանում ուսումնական խմբային պարապմունքների կազմակերպումը յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, սերտորեն զուգակցմամբ անհատական մոտեցումով: Մինչև 1990-ական

թվականները ուսուցման մեջ հիմնական ուղղվածությունը անհատական մոտեցումն էր, ներկայումս նախապատվությունը տրվում է դիֆերենցված ուսուցմանը: Մասնավորապես ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման ժամանակ առաջարկվում է դիֆերենցված ուսուցումն անցկացնել պարապողների շարժողական պատրաստվածության մակարդակը երեք խմբով հաշվառումով՝ ցածր, միջին, բարձր:

Այսպիսով, վերը բերված դիդակտիկական սկզբունքները հանդիսանում են ընդհանուրի կողմից ընդունված, նրանք կազմում են ավանդական ուսուցման համակարգի հիմքը: Այստեղից առաջարկություն բոլոր ուսուցիչներին և մարզիչներին. անհրաժեշտ է կողմնորոշվել ոչ թե ուսուցման առանձին սկզբունքների վրա, այլ նրանց համակարգի վրա, անհրաժեշտ է տեսնել մանկավարժական գործընթացի հակառակ կողմերը և հմտորեն կարգավորել նրանց փոխգործողությունները, անհրաժեշտ է, որ սկզբունքներից ամեն մեկը իրացվի յուրաքանչյուր ուսումնական պարապմունքի ժամանակ:

### ***1.3.3. Ուսուցման մեթոդները***

Ինչպես սովորեցնել. դիդակտիկական ավանդական այս հարցի պատասխանի որոնումները մեզ բերում են ուսուցման մեթոդների հիմնավորմանը: Առանց մեթոդների հնարավոր չէ հասնել առաջադրված նպատակին, իրացնել ուսուցման գործընթացի նախատեսված բովանդակությունը: Ահա թե ինչու է մեթոդը հանդիսանում ուսումնական գործընթացի միջուկը և հանդես է գալիս որպես պատմական կատեգորիա:

Ուսուցման մեթոդը բավականին բարդ և ոչ միանշանակ հասկացություն է: Մինչ օրս դիդակտ գիտնականները չեն եկել այդ մանկավարժական կատեգորիայի էության միանման հասկացության և մեկնաբանման: Եվ բանը նրանում է, որ հիմնահարցին բավարար ուշադրություն չի դարձվել: Հակա-

ռակը, ահա քանի դար է մարդկությունը ուսուցանում է իր աճող սերունդը, նույնքան ժամանակ էլ շատ գիտնականներ իրենց ուժն ու ժամանակը նվիրում են դրան, իրենց մտքերն ու պատկերացումները շարադրելով հրապարակումներում:

Հիմնախնդիրը կայանում է այդ հասկացության բազմակողմանիության մեջ: Համաձայն մանկավարժական գիտության զարգացման, սրբագրվում են նաև հայացքները ուսուցման մեթոդների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ այդ մանկավարժական հասկացության մեկնումը դեռևս երկար կշարունակվի:

Փորձենք տալ ըստ տարբեր հեղինակների ուսուցման մեթոդների հասկացության էական սահմանումները: Սակայն, հարկ է նշել, որ հեղինակները հակված են ուսուցման մեթոդը համարել սովորողների ***ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման միջոց:***

Ի.Ֆ.Խարլանովի կարծիքով ուսուցման մեթոդ անվան տակ պետք է հասկանալ ուսուցանող դասատուի գործունեության միջոցները ուսումնաճանաչողական գործունեության և տարբեր մանկավարժական խնդիրների լուծման ժամանակ: Ռուս հայտնի դիդակտ Յու.Կ.Բաբանսկին գտնում է, որ ուսուցման մեթոդը դա ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության կանոնավորված միջոցն է, որն ուղղված է կրթական խնդիրների լուծմանը: Մոտավորապես նման սահմանման է հետևում Ն.Վ.Սավինը:

Ուսուցման գործընթացում գլխավոր խնդիրը կայանում է նրանում, որպեսզի աշակերտներին ներգրավել ուսումնական գործընթացում և օգնել կազմակերպել ուսումնական գործունեությունը: Հենց այդ պատճառով էլ Տ.Ա.Իլյինան ուսուցման մեթոդը դիտարկում է որպես աշակերտների ճանաչողական գործունեության կազմակերպման միջոց:

Նոր համակարգչային տեխնոլոգիաների ստեղծումը թույլ է տալիս ուսումնական գործընթացը (բայց ոչ դաստիա-

րակությունը) կառուցել ընդհանրապես առանց ուսուցչի և առանց աշակերտի և ուսուցչի համատեղ գործունեության կազմակերպման: Սա մեկ անգամ էլ մեզ մոտեցնում է այն հասկացության փաստին, որ ուսուցման գործընթացի առաջատար օղակը հանդիսանում է պարապրոլների ուսումնական գործունեության կազմակերպումը:

Հետևաբար կարելի է եզրակացնել, որ ուսուցման մեթոդները սովորողների ուսումնաճանաճողական գործունեության կազմակերպման միջոցներն են, նախապես որոշված խնդիրներով և սպասվող արդյունքներով:

Վերջնական արդյունքում ժամանակակից դիդակտիկայում օգտագործվում են երեք տեսակի առանձնացված ուսուցում:

- **Ավանդական** կամ բացատրական-պատկերազարդված: Դա ուսուցման ամենահին ձևն է, որն այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը:

- **Պրոբլեմային:** Նախատեսում է խնդիրների պրոբլեմային դրվածք, ուսումնական առաջադրանքներում ծագող հակասությունների բացահայտման ճանապարհով, խթանում է առաջադրված հարցերի ինքնուրույն լուծմանը: Ուսուցման այս տեսակն ունի դրական և բացասական կողմեր: Դրական կողմը ստեղծագործական գործունեության ինքնուրույնությունն է, ուսման նկատմամբ բարձր հետաքրքրությունը, մտածողության զարգացումը: Բացասականներին դասվում են աշակերտության ճանաչողական գործունեության թույլ կառավարելիությունը, ժամանակի մեծ կորուստները:

- **Ծրագրավորված և համակարգչային ուսուցում:** Ծագել է 20-րդ դարի երկրորդ կեսին: Դրան սկսեցին համարել ուսուցման նոր տեխնոլոգիաների հիմքը: Ծրագրավորված ուսուցման էությունը հաջորդական գործողությունների համակարգ է՝ պլանավորված ուսումնական առաջադրանքների կատարման նպատակով: Ընդ որում ուսումնական նյութը փուլ

առ փուլ մասնատվում է չափաբաժինների, այնուհետև քայլ առ քայլ հաջորդաբար լուծվում են այդ առաջադրանքները: Յուրաքանչյուր քայլը խստորեն հսկվում է և գնահատվում: Եթե առաջադրանքը կատարված է ճիշտ, սովորողը ստանում է նոր առաջադրանք և այլն:

Համակարգիչների երևան գալով ծրագրավորված ուսուցումը վերածվեց համակարգային ուսուցման: Հայտնվեցին ալգորիթմներ, այսինքն հաջորդական գործողությունների համակարգ, որը տանում է ճիշտ արդյունքի: Դրա համար մշակվում են հատուկ ծրագրեր ուսումնասիրվող առարկայի գծով (տես գլուխ 4):

Չի կարելի մոռանալ, որ ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցման մեթոդները կատարում են ուսուցողական, զարգացնող, դաստիարակչական և վերահսկման (շտկողական) ֆունկցիա (աղ. 1):

### Աղյուսակ 1

#### *Ուսուցման մեթոդները և նրանց ֆունկցիաները\**

<i>Ուսուցման մեթոդները</i>	<i>ուսուցանող</i>	<i>զարգացնող</i>	<i>դաստիարակող</i>	<i>ստուգողական</i>
զրույցի	5	5	5	3
դասախոսության	5	5	4	2
բացատրման	5	5	5	1
ցուցադրման	5	5	5	3
տեսաերիզի	5	4	3	5
գործնական վարժման	5	4	3	5
ծրագրավորված	4	2	2	3
համակարգչային	5	4	3	5

**\* ) հինգ միավորանոց համակարգով**

Մեթոդի միջոցով հասնում են ուսուցման նպատակին (ուսուցանող ֆունկցիա), պայմանավորվում են սովորողների

զարգացման տեմպերն ու մակարդակը (զարգացնող ֆունկցիա), ինչպես նաև դաստիարակության արդյունքները (դաստիարակող ֆունկցիա): Բոլոր մեթոդների արդյունքների օգտագործումը թույլ է տալիս վերահսկել, որոշել և շտկել ուսուցման գործընթացը:

### ***1.3.4. Ուսուցման դիագնոստիկա***

Կրթական գործընթացի անքակտելի բաղադրամաս է հանդիսանում դիագնոստիկան, որի օգնությամբ էլ որոշվում է առաջադրված նպատակին հասնելը: Ուստի, առանց դիագնոստիկայի անհնար է դիդակտիկական գործընթացի արդյունավետ կառավարումը:

Դիագնոստիկան ներառում է վիճակագրական տվյալների հսկողությունը, ստուգումը, գնահատումը, կուտակումը և վերլուծությունը, զարգացման դինամիկայի հայտնաբերումը և ուսուցման արդյունքների կանխագուշակումը: Դրանք մանկավարժական տեխնոլոգիաների շատ հին բաղադրիչներ են, որտեղ միացնող հասկացություն է հանդիսանում հսկումը: Հսկումը պետք է իրականացվի մշտապես, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

Դիալեկտիկորեն հսկողությունը ներառում է մի քանի փուլ.

- առաջին՝ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ի հայտ բերումը,
- երկրորդ՝ ընթացիկ ստուգումը,
- երրորդ՝ կրկնակի ստուգումը,
- չորրորդ՝ պարբերական ստուգումը,
- հինգերորդ՝ ամփոփիչ ստուգումը:

Ներկա ժամանակ ուսուցման արդյունքների ստուգման լայն տարածում են գտել դիդակտիկական թեստերը: Սկզբունքորեն այդ թեստերը կոնկրետ նյութի գծով տիպօրինակային

առաջադրանքների հավաքածու են, որի օգնությամբ սահմանվում է աշակերտների կողմից դրանց յուրացման աստիճանը: Հետաքրքիր է, որ ամենաառաջին թեստերը աշխարհում ի հայտ եկան 19-րդ դարի վերջում: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր թեստը պետք է լինի վստահելի և անկողմնակալ (օբյեկտիվ):

Գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման տակ դիֆակտիկան հասկանում է աշակերտի կողմից դրանց տիրապետման մակարդակի համեմատության գործընթաց ուսումնական ծրագրում նկարագրված էտալոնային պատկերացումների հետ: Որպես գործընթաց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատումը իրացվում է հսկողության, այսինքն դրանց ստուգման ընթացքում: Գնահատման պայմանական արտացոլում է հանդիսանում բալային արտահայտությամբ գնահատականը: ԱՊՀ երկրներում և Հայաստանում ընդունված է 4 բալային համակարգը («5», «4», «3» և «2»): Աշխարհի տարբեր երկրներում նաև գոյություն ունեն գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման ուրիշ սանդղակներ: Օրինակ, Բուլղարիայում՝ 6 բալանի, Կուբայում՝ 10 բալանի, Ֆրանսիայում՝ 20 բալանի և այլն:

Ներկայումս Հայաստանի կրթության Ազգային ինստիտուտում փորձարառական ստուգման է ենթարկվում սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման 10 բալանի համակարգը:

### **ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

1. Ինչպես և երբ է ծագել մանկավարժությունը: Այն կենսաբանական, հոգեբանական, թե հասարակական երևույթ է:

2. Որն է ձեր կարծիքով մանկավարժական գիտության օբյեկտը՝ դաստիարակությունը թե կրթությունը: Պարզաբանեք ձեր ընտրությունը:

3. Նկարագրեք մանկավարժությանը բնորոշ գծերը և կողմերը:

4. Որոնք են ուսուցման և դաստիարակության տարբերիչ առանձնահատկությունները:

5. Նկարագրեք մանկավարժության և դիդակտիկայի տարբերիչ կողմերը:

6. Ուսուցման ինչպիսի հարցերով է զբաղվում դիդակտիկան: Նկարագրեք դիդակտիկայի ֆունկցիաները:

7. Ինչու է դիդակտիկան համարվում մանկավարժական գիտություն ղեկավարման մասին:

8. Բնութագրեք ուսուցման գործընթացի մանկավարժական հիմունքները և կառուցվածքը:

9. Բացահայտեք հայ մանկավարժների ներդրումը դիդակտիկայի զարգացման գործում:

10. Նկարագրեք դիդակտիկայի ընդհանուր և մասնակի օրինաչափությունները:

11. Վերլուծեք ուսուցման գործընթացում կիրառվող մեթոդների էությունը:

12. Ինչու է կայանում ուսուցման սկզբունքների էությունը, նրանց գոյություն ունեցող դասակարգումները:

13. Բացահայտեք «մատչելի» և «հեշտ» հասկացությունների տարբերությունը:

14. Բերեք մի քանի օրինակներ մատչելիության սկզբունքի իրականացման վերաբերյալ:

15. Ինչու է կայանում ուսուցման դիագնոստիկայի էությունը և նրա չափորոշիչները:

16. Բացահայտեք գնահատում երևույթը և ինչով է այն տարբերվում գնահատականից:

17. Ձեր կարծիքով գնահատման որ տեսակի սանդղակներն են ավելի հեռանկարային:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐ**

**Ամիրջանյան Յու.** Մանկավարժություն.-Երևան.-Մանկավարժ.-2004.-411 էջ

**Ամիրջանյան Յու.** Ժամանակակից դիդակտիկա.-Երևան.-1991

**Կոմենսկի Յ.Ա.** Մեծ դիդակտիկա.-Երևան.-Հայպետուսմանկիրատ.-1962.-333 էջ

**Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Ա.Ա.** Ֆիզիկական դաստիարակության տեսություն. - Երևան. - Պարբերական.-2003. - 168 էջ

**Ղույունջյան Գ.Ե.** Մանկավարժություն.-Երևան.-Ջանգակ.-2005.-երկու գրքով

**Մանկավարժություն.** Յու.Բաբանսկու խմբ.-Երևան.-Լույս.-1986.-1-2 հատոր

**Մանուկյան Ս.Պ.** Մանկավարժագիտություն.-Երևան.-Ջանգակ.-2002.-512 էջ

**Մախչանյան Հ.Ս. Մանուկյան Ա.Ս.** Մանկավարժության ընդհանուր հիմունքները.-Երևան.-ԵՊՀ.-1997.-220 էջ

**Սարգսյան Ն.Գ.** Մանկավարժության առարկան և մեթոդները.-Երևան.-ՀՊՄԻ.-1976.-123 էջ

**Ուշինսկի Կ.Դ.** Մանկավարժական ընտիր երկեր.-Երևան.-Հայպետուսմանկիրատ.-1958.-հ.1-345 էջ

**Белорусова В.В.** Педагогика.-М.:ФуС.-1986.-228 с.

**Дьяченко В.К.** Новая дидактика.-М.: Просвещение.-2001.-313 с.

**Крившенко А.П.** Педагогика.- М.: Проспект.-2004.-432 с.

**Лернер И.Я.** Дидактические основы методов обучения.-М.: Педагогика.-1981.-185 с.

**Оконь В.** Введение в общую дидактику.-М.: Высшая школа.-1990.-383 с.

**Пидкасистый П.И.** Педагогика.-М.: Педагогическое общество России.-1998.-640 с.

**Подласый И.П.** Педагогика.-М.: Просвещение.-1999.-432 с.

**Ушинский К.Д.** Избранные произведения.-М.: Просвещение.-1974.-т.1.-с.237

**Харламов И.Ф.** Педагогика.-М.: Высшая школа.-1990.-576 с.

## ԳԼՈՒԽ 2

### ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԻՂԱԿՏԻԿԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

#### *2.1. Ակունքները*

Ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության գործընթացի, ինչպես և ցանկացած այլ մանկավարժական գործընթացի կողմերից մեկը հանդիսանում է ուսուցումը:

Չետաքրքիր է իմանալ, որ դեռևս 1541 թվականին գերմանացի գիտնական Յոհիմ Կամերարիուսը իր «Երկխոսություն գիմնաստիկայի մասին» աշխատության մեջ, որը հրատարակվել է Լայպցիգում, մշակել է ֆիզիկական դաստիարակության, որպես կրթական համակարգում ուսումնական առարկայի հիմունքների առաջին նախագծային ուրվագծերը: Այս գործում էական դեր է խաղացել գերմանացի մանկավարժ Ի.Ք.Գուբս-Մուբսը, 1793 թվականին հրատարակելով ըստ էության ֆիզիկական դաստիարակության գծով առաջին դասագիրքը՝ «Գիմնաստիկա երիտասարդության համար»: Այդ աշխատանքի շնորհիվ Գերմանիայում ֆիզիկական դաստիարակությունը ընդգրկվեց դպրոցական կրթական համակարգում:

Միևնույն ժամանակ կարելի է նշել, որ դպրոցական մարմնամարզության (գիմնաստիկայի) նախահայրը հանդիսանում է գերմանացի մեկ այլ մասնագետ՝ Ա.Շպիսը (1816-1858): Մարմնամարզության դասավանդումը նա անվանում էր «ուսուցման և դաստիարակման արհեստանոց»: 18-րդ դարում տարբեր երկրների գիտնականներ, ուսումնասիրելով անցյալի փորձը, ստեղծում էին մանկավարժական համակարգեր և տեսություններ, որոնցում նկատելի տեղ էին զբաղեցնում ֆիզիկական դաստիարակությունը և սպորտը: Այսպես, Դ.Լոկը (1632-1704) զանազան ֆիզիկական վարժություններ էր առա-

ջարկում ոչ միայն շարժողական ընդունակությունների մշակման համար, այլև որպես կամքի ու բնավորության ամրապնդման միջոց: Ի.Գ.Պեստալոցին (1746-1827) ժամանակին ստեղծեց այսպես կոչված «շարժումների այբուբենը», որտեղ մտնում էին ֆիզիկական վարժություններ և մարզական տարրեր:

Նոր ժամանակի մանկավարժական տեսության համատեքստում Ժ.Ժ.Ռուսսոն (1712-1778) առաջին անգամ հռչակեց և հիմնադրեց ֆիզիկական դաստիարակության համառանհրաժեշտության մասին գաղափարը: Դրա շնորհիվ ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտության մասին պատկերացումը ձեռք բերեց ամուր հիմք: Այսպես, Ժ.Ժ.Ռուսսոյի զարգացնող ուսուցման կարևորության մասին գաղափարը այսօր էլ հանդիսանում է սպորտային ուսուցման բարձունքը:

Ինչպես հայտնի է, ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության դիդակտիկայի առարկա է հանդիսանում ֆիզիկական վարժությունը: Դրա վրա դեռևս ուշադրություն են դարձրել հնադարյան Հունաստանի փիլիսոփաները: Այսպես, Պլատոնն ասում էր, որ յուրաքանչյուրը, ով ցանկանում է կատարելագործվել, պետք է մշտապես վարժվի, իսկ Դեմոկրիտը գտնում էր, որ մարդիկ լավ են դառնում ավելի շուտ վարժություններով, քան բնությամբ:

Զեխ անվանի մանկավարժ Յա.Ա.Կոմենսկին վարժությունը համարում էր ուսուցման և կրթության համընդհանուր օրենք:

Հետագայում Ժ.Բ.Լամարկի հայտնագործած վարժության օրենքը (1809) այսօր էլ թափանցում է ամբողջ սպորտային մանկավարժությունը, զանազան աշխատանքային և ռազմական գործընթացներ:

Պատահական չէ, որ այս կապակցությամբ մեծ գրող և մանկավարժ Ղ.Աղայանը գրում էր. «Կյանք ունեցող էակի

հանգստությունը շարժունակության մեջ է, իսկ անհանգստությունը՝ անշարժության» (1963):

Ահա թե ինչու ֆիզիկական դաստիարակության ու սպորտի տեսությունը հանդիսանում են գիտամանկավարժական առարկաներ, որոնք հասունացել ու սնուցվել են ընդհանուր մանկավարժության գրկում: Նրանց հարկ է դիտարկել որպես ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության առանձնահատկություններին տրամադրված պրոֆիլավորված մանկավարժության ճյուղեր:

Դեռևս մեր թվարկությունից առաջ երեխաներին ֆիզիկական վարժությունների ուսուցման մեջ պատվավոր տեղ էին զբաղեցնում այսպես կոչված «մանկական մարզիչները», որոնք դասավանդում էին մարմնամարզությունը, այսօրվա հասկացությամբ ֆիզիկական դաստիարակությունն ու սպորտը (Ա.Ի.Մարրու, 1998): Նրանց կարևոր դեր էր հատկացվում երեխաներին վազք, նետումներ, ցատկեր, ըմբշամարտ, բռնցքամարտ սովորեցնելու մեջ: Այդ իսկ պատճառով կարելի է եզրակացնել, որ դեռևս հին աշխարհում ֆիզիկական դաստիարակությունը և սպորտը ընկալում էին որպես լուրջ զբաղմունք, որը սերտորեն կապված է բժշկության, հիգիենայի և գեղագիտության հետ: Ըստ որում մարզական մանկավարժությունը այն ժամանակներում սեռի և տարիքի հետ կախված առանձնապես չէր տարբերվում: Երեխաները և հատկապես աղջիկները կատարում էին առավել հասարակ ֆիզիկական վարժություններ:

Եվ այսպես, ուսուցումը հանդիսանում էր ֆիզիկական դաստիարակության և սպորտի տեսության և պրակտիկայի հիմնական կողմերից մեկը:

## **2.2. Սպորտային պատրաստության դիդակտիկայի առանձնահատկությունները**

«Ուսուցում» հասկացությունը պետք է դիտարկել երկու տեսանկյունով. որպես դաստիարակության և կրթության կազմակերպման *ձև* և որպես *մանկավարժական գործընթաց*, որն ընթանում է առանձնահատուկ դիդակտիկական պայմաններում: Առավել կարևոր է ուսուցման երկրորդ տեսանկյունը, երբ ուսուցումը դիտարկվում է որպես շարժման և զարգացման գործընթաց, ինչը բնորոշ է ֆիզիկական դաստիարակության և սպորտի պրակտիկայի համար:

Ուսուցումը կրթության և դաստիարակության հետ, անկասկած, պատկանում է սպորտային մանկավարժության տեսության և պրակտիկայի հիմնական խնդիրների շարքին: Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ կրթությունը, դաստիարակությունը և ուսուցումը փոխապայմանավորված են: Ինչպես առանց ուսուցման գոյություն չունի դաստիարակություն, կրթություն, այնպես էլ չի կարող լինել ուսուցում առանց դաստիարակության և կրթության:

Ցանկացած ուսուցում ունի թեմատիկ բնույթ և իրագործվում է այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում: Որտեղ էլ որ անցնի ուսուցումը, մարդն ինչ էլ որ սովորի, միշտ էլ ուսուցման գործընթացում խոսքն ընթանում է որոշակի կարողությունների ու հմտությունների յուրացման, մեր դեպքում՝ շարժողականի մասին:


Կարևոր է նշել, որ սպորտային դիդակտիկական վարքի ոչ բոլոր ձևերն է ուսումնասիրում, այլ միայն նպատակաուղղվածները, այսինքն, որոնց նպատակն է հանդիսանում մարդկային գործունեության փոխակերպումը, մարզական հաջողության հասնելու նպատակով, կոնկրետ շարժողական գործողությունը տեխնիկապես ճիշտ, նպատակային և արդյունավետ կատարելու հմտությունը:

Մասնագետները գտնում են, որ ֆիզիկական դաստիարակությունում ուսուցման նպատակ է հանդիսանում նաև այդ հիման վրա՝ ուսումնական, կենցաղային, աշխատանքային, պաշտպանական և ֆիզկուլտուրային-մարզական գործնական խնդիրների լուծման համար շարժումների ղեկավարման կարողությունների ու հմտությունների, գիտելիքների ձևավորումը (Վ.Վ.Բելիճովիչ, Մ.Ս.Բոգեն, Ֆ.Գ.Ղազարյան և ուրիշ.):

Սակայն պարզ է մի բան, որ մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտում նպատակը, խնդիրները, ուղղվածությունը և ուսուցման գործընթացի բովանդակությունը չի կարող նույնական լինել: Այսպես, օրինակ, եթե ֆիզիկական դաստիարակության ընդհանուր պատրաստության ուղղությամբ ուսուցումը նախատեսում է քայլքի, վազքի, լողի, ցատկերի, նետումների և այլնի կիրառական հմտությունների ձևավորում, ապա սպորտային ուղղվածության բովանդակությունը ձևավորվում է նեղ մասնագիտական առարկայի յուրահատկություններին համապատասխան և ձևավորվող շարժողական հմտությունների կայունության պահպանումով:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի դիդակտիկական որպես մանկավարժական առարկա օգտվում է մանկավարժության ընդհանուր հասկացություններից՝ «մանկավարժություն», «դաստիարակություն», «մանկավարժական գործունեություն», «մատչելիություն» և այլն: Բացի այդ, օգտագործվում են նաև առանձնահատուկ հասկացություններ: Դրանց վերաբերում են «սպորտային մասնագիտացման ձև», «բեռնվածությունը», «վարժությունների հերթականությունը», «մոտեցնող» (նմանողական) և «հատուկ վարժությունները», «ուսուցման մեթոդը», «կատարման եղանակը» և այլն: Բոլոր այս հասկացությունները փոխկապակցվածության մեջ են, նրանք շարժուն են, ինչպես այն երևույթները, որոնք դրանցում արտացոլվում են:

Բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում ուսուցման առաջատար դիալեկտիկական մոդելը, ինչպես հայտնի է, եղել է «ուսուցիչ-աշակերտ» տեսակը: Ուսուցման այս տեսակը հատկապես լայն կիրառում է գտել մարզական պրակտիկայում, երբ առաջին գծում գտնվում է ուսուցիչ-մարզչի և աշակերտի միջև շփումը: Ահա թե ինչու ուսուցման գործընթացի դիալեկտիկական կանխատեսում է ուսուցիչ-մարզչի համագործակցությունն ու հետագա քայլերը: Մանկավարժը առանձնացնում է անհրաժեշտ գիտելիքների ու գործողությունների շրջանակը և հետևողականորեն մատուցում է պարապողին: Աշակերտը ընկալում է առաջադրանքը և ակտիվորեն յուրացնում այն: Արդյունքում յուրացված գիտելիքը սկզբում վերածվում է պատկերացման, իսկ հետո գործունեության հմտության, որը հանդես է գալիս որպես ուսուցման արդյունք: Դա համոզիչ արտացոլված է նկ. 4-ում:




**Նկար 4. Գիտելիքների, դասավանդման և ուսման փոխհարաբերությունը ուսուցման համակարգում**

Ելնելով դրանից, ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման դիդակտիկայում հարկ է զանազանել երկու դիալեկտիկական փոխկապակցված հարաբերություններ կամ գործընթացներ. դասավանդումը և ուսումը (նկ. 5):

Առաջին առանցքին (հիմնական հարաբերություն - 1) ներկայացված է հարաբերությունը դասավանդման ու ուսուցման միջև: Այն հանդիսանում է հիմնական դիդակտիկական հարաբերությունը և արտացոլում է դասավանդման (ուսուցիչ, մարզիչ) և սովորելու (սովորողներ) փոխադարձ կապը: Երկրորդ առանցքին (հիմնական հարաբերություն - 2) ներկայացված է հարաբերությունը բովանդակության (ուսուցում, օրինակ, վազքի տեխնիկայի) և մեթոդի միջև (օրինակ, կրկնողական): Ըստ էության, դա ուսուցման գործընթացի մեթոդաբանական կողմն է:

Բ և Դ ուղիղ գծերն արտացոլում են դասավանդում, ուսում, բովանդակություն և մեթոդ կատեգորիաների միջև եղած փոխկապակցվածությունը:



Նկար 5. Դիդակտիկ հիմնական հարաբերությունները


Ուսուցումն ընդհանուր դիդակտիկական դրույթների հետ ֆիզիկական դաստիարակության գործընթացում բնորոշվում է իր յուրահատկություններով: Դրանք արտահայտվում են նախ և առաջ այն բանով, որ այստեղ ուսուցման ուրույն առարկա, ինչպես նշված է վերը, հանդիսանում են շարժողական գործողությունները (ֆիզիկական վարժությունները) և այդ շարժումների ուսուցումը կառուցվում է շարժողական կարողությունների ու հմտությունների ձևավորման օրինաչափություններին համապատասխան:

Շարժողական գործողությունների ընթացքում դիդակտիկական սկզբունքների համակարգին հենվելու կարևորությունը ընդունվում է տառացիորեն բոլոր մասնագետների, ինչպես գիտնականների, այնպես էլ մեթոդիստների կողմից: Այդ պատճառով էլ դիդակտիկական անհրաժեշտ է ճանաչել որպես ֆիզիկական վարժությունների ուսուցման տեսության և պրակտիկայի մեթոդաբանական հիմքի տարր:

Ձանազան շարժողական գործողությունները ձևավորվում են մարդու ամբողջ կյանքի ընթացքում, բազմաթիվ գործոնների ազդեցության տակ, և դրանց ձևավորման գործընթացը կարող է ունենալ տարբեր բնույթ: Այդ գործընթացի բարենպաստությանը կարելի է հասնել ուսուցման նպատակահարմար կառուցված պայմաններում: Նման պայմաններում շարժողական գործողությունների ձևավորման և կատարելագործման գործընթացը ընդունված է ներկայացնել որպես տվյալ վարժությունների մասին գիտելիքների և շարժողական փորձի հաջորդական և ապա, կարողությունից հմտության անցում (նկ. 6):

Այստեղից կարելի է եզրակացնել, որ շարժողական գործողությունները կամ ֆիզիկական վարժությունները հոյակապ նյութ են ցանկացած ուսուցման հնարքների և ընդհանուր սկզբունքների ուսունմասիրման և ցուցադրման համար:

Իրականում, երբ մարդը լույս աշխարհ է գալիս, ոչ մի գիտելիքի, կարողության և հմտության, որոնք այնքան անհրաժեշտ են կյանքում, չի տիրապետում: Դրանք ձեռք են բերվում նպատակաուղղված ուսուցման արդյունքում: Առաջինը, ինչը կյանք մտնող մարդը սկսում է սովորել, շարժողական գործողություններն են, որոնց ուսուցումը շարունակվում է երկար ժամանակ:



**Նկար 6. Շարժողական գործողության ձևավորման ընթացքը**

Ուսուցումը շարժողական գործողություններին անհրաժեշտ է ցանկացած գործունեությունում: Սակայն ֆիզիկական դաստիարակությունում և սպորտում այն հանդիսանում է ուսուցման միջուկը: Դա հիմնավորված է նրանով, որ այստեղ շարժողական գործունեությունը հանդես է գալիս կատարելագործման թե որպես օբյեկտ, թե որպես միջոց և թե որպես նպատակ:

Ըստ որում, ֆիզիկական դաստիարակությունում և սպորտային պատրաստության մեջ նման ուսուցումը անցնում է

բավականին ուրույն ձևով, որտեղ առարկան հանդիսանում են ֆիզիկական վարժությունները:

Դիդակտիկական գործընթացները հատուկ ձևով կապված են *«տեխնիկա»*, մեր դեպքում «ֆիզիկական վարժությունների տեխնիկա» ֆենոմենի հետ: Դիդակտիկական տեսակետից տեխնիկական ներկայանում է թե ինչպես մարզիկի որակական տեխնիկական պատրաստություն և թե որպես ուսումնական առարկայի համապատասխան բաժին: Դրան նշանակալիորեն նպաստում է շարժումների ուսուցման տեխնիկական միջոցների, մարզասարքերի և տեխնոլոգիական մեթոդների օգտագործումը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը, առանձին մարզածների գծով մարզիչը, առողջարարական և ադապտացված ֆիզիկական կուլտուրայի մեթոդիստը ուսուցման ընթացքում ուշադրությունը կենտրոնացնում է շարժումների կինեմատիկական և դինամիկական բնութագրերի, նրանց նպատակահարմարության և խնայողականության վրա: Ի տարբերություն դրան, նկարիչը, ուսուցման ընթացքում, որոշակի կեցվածքներում առանձնացնում է արտաքին արտահայտիչ բնութագրերը, հոգեբանը՝ առանձնացնում է այն գործոնները, որոնք ապահովում են կարողությունների ու հմտությունների գործողությունների և կառավարման մասին գիտելիքների հաջող փոխանցումը և այլն:

Բոլոր դեպքերում ուսումնասիրվող առարկան (մեր դեպքում ֆիզիկական վարժությունը) պարապողների կողմից ընկալվում է նպատակաուղղված, առարկայի յուրացմանը տրված ցուցումներին համապատասխան:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի դիդակտիկական ուսումնասիրում է գործելակերպի ոչ բոլոր ձևերը, այլ միայն նպատակաուղղվածները, այսինքն նրանք, որոնց նպատակն է հանդիսանում կոնկրետ գործունեության վերափոխումը: Օրինակ, բարձրացատկում «ֆուսբերի-ֆլոպ» եղանակի

ուսուցումը, կամ ըմբռանարտում՝ բռնվածքով գցումների ուսուցումը և այլն:

Ռուս հայտնի ֆիզիոլոգ Ն.Ա.Բերնշտեյնը (որին անվանում են ֆիզիոլոգիայի Ֆարադեյ) ասում էր, որ վարժությունը դա կրկնություն է առանց կրկնությունների: Եվ դա այն պատճառով, որ մարդը չի կարող երկու անգամ միանման վերարտադրել նույն շարժումը: Դրանք տարբեր են, ինչպես մատնանշանները: Այստեղից էլ բացահայտվում է շարժումների ուսուցման դժվարությունը:

Ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության դիդակտիկական դիտարկում և ուսումնասիրում է ոչ միայն ուսուցման ընդհանուր օրինաչափությունները, այլև կոնկրետ առարկայի ուսուցման յուրահատկությունները, ուսումնասիրվում են մասնակի դիդակտիկական մեթոդիկաներում՝ լողում, աթլետիկայում, բռնցքամարտում, սուսերամարտում, մարզախաղերում և այլն: Բոլոր մասնակի առարկայական մեթոդիկաները հիմնված են ընդհանուր դիդակտիկայի սկզբունքային դրույթների վրա: Միևնույն ժամանակ նաև ընդհանուր դիդակտիկական է սահմանում ուսուցման հիմնական օրինաչափությունները, հենվելով կոնկրետ մեթոդիկաների տվյալների վրա: Ըստ որում դիդակտիկայի և մասնակի մեթոդիկաների զարգացումը իրագործվում է միասնաբար:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գծով ուսումնագիտական առարկաներում օգտագործվում է թե ֆիզիկական դաստիարակության մեթոդիկան, և թե տարբեր մարզաձևերի ուսուցման մեթոդիկան: Միաժամանակ, յուրաքանչյուր առանձին մարզաձևում զոյություն ունեն ուսուցման առանձին մեթոդիկաներ, օրինակ, սկսնակ մարզիկների, բարձր որակավորում ունեցող մարզիկների և այլն:

Սպորտային մանկավարժության տեսակետից կարելի է տարբերել ուսուցման հետևյալ ձևերը.

- շարժումների ուսուցում,

- սոցիալ-բարեկիրթ վարքի ուսուցում,
- բարոյականության ուսուցում,
- ճանաչողական (կոգնիտիվ) ուսուցում:

Ուսուցումը որպես մարզական մանկավարժության ուղորտներից մեկը, ամփոփված է մոտորային, շարժողական ուսուցման մեջ: Շարժողական ուսուցման հետ կապված հասկացությունների շրջանակ մտնում են նաև այնպիսի սահմանումները, ինչպիսիք են շարժողական ընդունակությունները, շարժողական հնարավորությունները, շարժողական վարքը, շարժողական կարողություններն ու հմտությունները և այլն:

Ուսուցման գործընթացի վրա ազդում են նաև էնդոգեն և էկզոգեն գործոնները: Էնդոգենայինին վերաբերում են մարմնակազմությունը, շարժողական պատրաստվածության մակարդակը, ֆիզիկական զարգացումը, սեռը, գիտելիքները: Էկզոգենային գործոնների խմբում են կյանքի սոցիալական և նյութական պայմանները, աշխարհագրական և կլիմայական գործոնները և այլն:

Պետք է խոստովանել, որ շարժողական կարողության և հմտության ուսուցման հաջողությունը կախված է պարապողի (ուսուցանվողի) ընկալման, մոտիվացիայի, հիշողության աստիճանից, խառնվածքից:

Ռուս հայտնի հոգեբան Ա.Ն.Լեոնտևը դեռևս 30 տարի առաջ ցուց տվեց, որ ցանկացած գործունեության, այդ թվում նաև ֆիզկուլտուրային-մարզականի հիմքում ընկած է մոտիվացիան:

Հոգեբանները գտնում են, որ մոտիվացիան այն գործոններն են ու գործընթացները, որոնք մարդուն մղում են գործողության, որոշակի նպատակի հասնելու համար ակտիվության: Մոտիվները ձևավորվում են մի ինչ-որ բանի պահանջարկի արդյունքում, օրինակ, վազքի տեխնիկայի ուսումնասիրում, որպեսզի կարողանալ արագ վազել, զբաղվել բոդիբիլդինգով, որպեսզի ունենալ գեղեցիկ մարմնակազմություն,

ընդունվել ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտ, լավ ուսուցիչ կամ մարզիչ դառնալու համար և այլն:

Ըստ Վ.Պ.Բեսպալկոյի, ուսուցումը որպես մանկավարժական գիտության կատեգորիա արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$ԴԳ = Մ + ՈւՃԳ + ՈւՂ,$$

որտեղ ԴԳ-ն դիդակտիկական գործընթացն է, Մ-ն՝ սովորողների մոտիվացիան, ՈւՃԳ-ն՝ սովորողների ուսումնաճանաչողական գործունեությունը և ՈւՂ-ն՝ ուսուցման ղեկավարումը:

Այժմ կրթության և դաստիարակության ընդհանուր համակարգում ֆիզիկական դաստիարակության տեղի ու դերի մասին:

Դեռևս նախնադարում հաստատվել է, որ ֆիզիկական վարժությունների օգնությամբ կարելի է խթանել մարդու ֆիզիկական զարգացմանը և ամրապնդել առողջությունը: Սրա հետ կապված ֆիզիկական կուլտուրան բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում և բոլոր ժողովուրդների մոտ մարդու ուսուցման և կրթության ավանդական առարկան է: Այս ուսումնական առարկայի անհրաժեշտությունը այնքան ակնհայտ է և ապացուցված է սերունդների կրթական պրակտիկայով, որ նույնիսկ կրթական հաստատությունների ուսումնական ծրագրում դրա ներդրման նպատակահարմարության մասին վերացական հարցադրումը, բացի զարմանքից, ուրիշ ոչինչ չի առաջացնի: Սակայն, եթե չի կարելի հրաժարվել այդ ուսումնական առարկայից, ապա կարող է ֆիզիկական դաստիարակության խնդիրների հետ կապ ունենան մյուս ուսումնական առարկաները: Նման հարցադրումն էլ, ինչ ձևով էլ այն առաջադրվի, կլինի անհրավական:

Ահա թե ինչու ուսումնական գործընթացը բոլոր օղակներում պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի այն նպաստի երեխաների, դեռահասների, պատանիների ֆիզիկական


զարգացմանը: Այլ կերպ ասած, սովորող երիտասարդության ֆիզիկական դաստիարակությունը իրականացվում է երկու եղանակով. հատուկ ուսումնական առարկայի միջոցով, ինչպես նաև մյուս ուսումնական բոլոր դասընթացներում որպես դրանց անքակտելի բաղադրիչներ:

Տարբեր տեսակի ուսումնական հաստատություններում, ուսուցման գործընթացում դասավանդվում են տարբեր ուսումնական առարկաները, այսպես կոչված դասընթացներ՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, ֆիզիկական կուլտուրայի և այլնի: Իր հերթին յուրաքանչյուր ուսումնական առարկա ստորաբաժանվում է համապատասխան բաժինների: Օրինակ, «Կենսաբանություն» ուսումնական դասընթացը ստորաբաժանվում է բուսաբանության, կենդանաբանության, մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի, ընդհանուր կենսաբանության: «Քիմիա» ուսումնական դասընթացը ստորաբաժանվում է անօրգանական և օրգանական քիմիայի: «Ֆիզիկական կուլտուրա» առարկան բաղկացած է տեսական և գործնական բաժիններից, բազային և ընտրովի նյութից և այլն:

Գիտելիքների գերակա ճյուղերի տեսանկյունից, ֆիզիկական դաստիարակությունը, մյուս առարկաների՝ լեզու, մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն և այլնի շարքում, ունի անհատի ընդհանուր ֆիզկուլտուրային կրթության ապահովման համապատասխան տիրապետող ուղղվածություն և նախատեսում է մի ամբողջ շարք ուսումնական առարկաների ուսումնասիրություն: Նկ. 7-ում բերված է ֆիզիկական դաստիարակության տեսակետից ընդհանուր կրթական առարկայական կառուցվածքը:

Դիդակտիկական ուսումնասիրում է ուսուցման որոշակի դասի հասարակայնորեն պայմանավորված գործընթացները, որոնք անցնում են ուսուցման կազմակերպման ուրույն ձևերով: Դա հատկապես կարևոր է ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության համար: Բանն այն է, որ այդ

առարկաները (օրինակ, քիմիան, ֆիզիկան, պատմությունը և այլն) ունեն իրենց ուրույն առանձնահատկությունները, որոնք կտրուկ տարբերվում են մյուս առարկաներից: Այստեղ, ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ, խստորեն պահանջվում է ապահովվումը և ինքնաապահովումը, հիգիենիկ պահանջների խստորեն հետևումը, փոխօգնությունը, բեռնվածության հստակ չափավորումը, առողջարարական, դաստիարակչական և կրթական խնդիրների համալիր լուծումը:



**Սկար 7. Ընդհանուր կրթության առարկայական կառուցվածքը ֆիզիկական դաստիարակության տեսանկյունից**

Բացի դրանից, ֆիզիկական կուլտուրան և սպորտը, որպես սոցիալական երևույթ, հանդիսանում են երեխաների, դեռահասաների, պատանիների, մեծահասակ բնակչության ֆիզիկական վիճակի և աշխատունակության պահպանման միջոց, առողջ պարելակերպի և վերականգնման կազմակերպման, տեսական գիտելիքների հարստացման, միջառարկայական կապերի ստեղծման միջոց և այլն:

Խոսելով աճող սերնդի համալիր և բազմակողմանի կրթության և դաստիարակության մասին, առաջատար մասնագետները առանձնացնում են մտավոր, բարոյական, էկոլոգիական և այլ կողմեր: Այստեղ կարևորն այն է, որ բոլոր հեղինակները հատուկ առանձնացնում են երեք բաղադրամասեր՝ ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակությունը: Դա արդարացի է նրանով, որ ֆիզիկական դաստիարակությունը, ի տարբերություն մյուս կողմերի, ունի տարբերակման մի շարք գծեր: Այն սկսվում է դեռևս ծնվելուց բավականին առաջ, շարունակվում է ամբողջ կյանքում, ընդգրկում է բնակչության ամբողջ տարիքասեռային կազմը, դա բազմամյա և համակարգված գործընթաց է: Որպես դաստիարակության ուրույն ձև, ֆիզիկական դաստիարակությունն ունի կրթական և դաստիարակչական ուղղվածություն: Այդ երկու կողմերն էլ սերտորեն փոխկապակցված են և կազմում են միասնական դիդակտիկական սկզբունքներին հատուկ մանկավարժական գործընթաց, որն իրականացվում է շարժողական գործունեության մեջ: Ֆիզիկական դաստիարակության կողմն է հանդիսանում զարգացնող բնույթը, որի վերջնական արդյունքն է ծառայում շարժումների կուլտուրայի զարգացումը, ֆիզիկական կատարելության հասնելը, անհատի ձևավորումն ու սոցիալական հարաբերությունների զարգացումը: Ուստի, ֆիզիկական դաստիարակությունն ու սպորտային պատրաստությունը հանդիսանում են հենքային, բազային կրթության կարևոր բաղադրիչ սովորողների նպատա-

կասլացության (հասարակական գիտություններ, էթիկա), մտավոր կրթության՝ գիտության հիմունքների (մաթեմատիկա, ֆիզիկա), աշխատանքային դաստիարակության՝ աշխատանքային պատրաստության, գեղագիտական կուլտուրայի՝ գեղարվեստական շարքի առարկաների, հաղորդակցական կրթության՝ լեզվական շարքի առարկաների կողքին:

Այսպիսով, ֆիզիկական դաստիարակության և սպորտի դիդակտիկան ոչ միայն ուսուցման տեսություն է, այլև ուսմունք է արվեստի մասին, ուսուցման գեղագիտության մասին: Մենք միշտ հիանում ենք գեղեցիկ, նրբագեղ շարժումներով, որոնք կատարում են մարմնամարզիկը, գեղասահորդը, ակրոբատը և այլ մարզածների ներկայացուցիչները: Դա արդյունք է այս կամ այն սպորտային վարժությունների բովանդակալից և գեղագիտորեն ճիշտ ուսուցման:

Դիդակտիկայի իմացությունը կարևոր է յուրաքանչյուր ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի համար, քանի որ առանց տեսական գիտելիքների վրա հենվելու, անհնար է ապահովել հաջող ուսուցում: Դիդակտիկայի հիմնավոր խորը իմացությունը մասնագետներին օգնում է նաև կանխագուշակել ուսուցման հաջողությունը:

Ուսուցման գործընթացում գործում են ոչ միայն դիդակտիկական, այլև հոգեբանական և ֆիզիոլոգիական օրինաչափությունները: Այս տեսակետից ուսուցումը ոչ միայն ուսուցիչ-մարզչի, այլև ֆիզիոլոգի, հոգեբանի, կառավարման տեսության մասնագետի (կիրեռնետիկի) և տեղեկատվության ուսումնասիրման առարկա է հանդիսանում: Այսպես, եթե մեթոդիստները հատուկ ուշադրություն են դարձնում ուսուցման ժամանակ օգտագործվող միջոցներին, մեթոդներին ու հնարքներին, ապա հոգեբանը ուշադրությունը կենտրոնացնում է ուսումնական նյութի յուրացման աստիճանի վրա, կիրեռնետիկայի և ինֆորմատիկայի մասնագետը՝ ուսուցչի և աշակերտի միջև ուղիղ և հակադարձ կապի վրա:

## ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Պատմականորեն երբ և ում շնորհիվ է հիմնավորվել ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտությունը:

2. Փորձեք հիմնավորել, ինչու են ֆիզիկական վարժությունները համարում ֆիզիկական դաստիարակության գործընթացի ելակետ:

3. Ինչն է պատճառը, որ ուսուցումը ֆիզիկական դաստիարակության պրակտիկայի հիմնական կողմերից մեկն է:

4. Ինչպիսի խնդիրներ է կոչված լուծելու սպորտային մանկավարժության դիդակտիկան:

5. Փորձեք բացահայտել ինչու է կայանում սպորտային մանկավարժության էությունը որպես գիտություն և արվեստ:

6. Ինչ տարբերություն էք տեսնում ուսուցման մեթոդի և ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևի միջև:

7. Ինչպիսի դիդակտիկական հասկացություններ են ընդունված սպորտային մանկավարժությունում:

8. Փորձեք համատեղել տարբեր տարիքի պատանի մարզիկների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մակարդակը:

9. Նկարագրեք շարժողական հմտության ձևավորման փուլերը ուսուցման ընթացքում:

10. Ինչու համար առանձին մարզաձևերի տեխնիկայի ուսուցումը համարվում է ուսուցման մասնակի մեթոդիկա:

11. Պարզաբանեք ինչու ուսուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների դրդապատճառները, արտաքին ու ներքին պայմանները:

12. Հիմնավորեք ֆիզիկական դաստիարակության տեղը և նշանակությունը աճող սերնդի կրթության ընդհանուր համակարգում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**Աղայան Ղ.** Երկերի ժողովածու. - Երևան.-Հայպետհրատ.-1963.-հ.IV.-էջ 38

**Ամիրջանյան Յու.** Ժամանակակից դիդակտիկա.- Երևան.-1991

**Ամիրջանյան Յու.** Մանկավարժություն.-Երևան.-Մանկավարժ.-2004.-411 էջ

**Մանկավարժություն. Յու.** Բաբանսկու խմբ.-Երևան.-Լույս.-1986.-1-2 մաս

**Կոմենսկի Յ.Ա.** Մեծ դիդակտիկա.-Երևան.-Հայպետուսմանկհրատ.-1962.-333 էջ

**Մանուկյան Ա.Մ. Մանուկյան Մ.Մ.** Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա.-Երևան.-Ջանգալ.-2000.-131 էջ

**Ղազարյան Ֆ.Գ.** Սպորտային պատրաստության հիմունքները.-Երևան.-Ջոքեր.-1993.-212 էջ

**Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Ա.Ա.** Ֆիզիկական դաստիարակության տեսություն.-Երևան. - Պարբերական. - 2003. - 168 էջ

**Ղուլունջյան Գ.Ե.** Մանկավարժություն. - Երևան.-Ջանգալ.-2005.- երկու գրքով

**Ուշինսկի Կ.Դ.** Մանկավարժական ընտիր երկեր.- Երևան.-Հայպետուսմանկհրատ.-1958.-հ.1.-345 էջ

**Белинович В.В.** Обучение в физическом воспитании.-М.: ФУС.-1958.-211 с.

**Белорусова В.В.** Педагогика.-М.: ФУС.-1986.-228 с.

**Боген М.М.** Обучение двигательным действиям.-М.: ФУС.-1985.-192 с.

**Дьяченко В.К.** Новая дидактика.-М.: Просвещение.-2001.-313 с.

**Крившенко Л.П.** Педагогика. - М.: Проспект.- 2004. - 432 с.

**Куписевич Ч.** Основы общей дидактики.-М.: Высшая школа.-1986.-368 с.

**Лернер И.Я.** Дидактические основы методов обучения.-М.: Педагогика.-1981.-185 с.

**Матвеев Л.П.** Теория и методика физической культуры.-М.: ФиС.-1991.-543 с.

**Маинберг Э.** Основные проблемы педагогики спорта.-М.: Аспект-пресс.-1995.-318

**Пидкасистый П.И.** Педагогика.-М.: Педагогическое общество России.-1998.-640 с.

**Подласый И.П.** Педагогика.-М.: Просвещение.-1999.- 432 с.

**Тер-Ованесян А.А.** Педагогические основы физического воспитания.-М.: ФиС.-1978.-206 с.

**Харламов И.Ф.** Педагогика.-М.: Высшая школа.-1990.- 576 с.

### ԳԼՈՒԽ 3.

## ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### *3.1. Դիդակտիկական համակարգերի վերլուծություն*

Հայտնի է, որ ուսուցման գործընթացը խարսխվում է մանկավարժական և հոգեբանական հայեցակարգերի վրա, որոնք ընդունված է անվանել դիդակտիկական համակարգեր: Յուրաքանչյուր համակարգ իր մեջ ներառում է նպատակների բնութագիրը, կրթության բովանդակությունը, դիդակտիկական միջոցներն ու մեթոդները, սկզբունքները, ուսուցման ձևերը:

Վերջին 300 տարիների ընթացքում հայտնվեցին դիդակտիկական զանազան համակարգեր, որոնք այսօր էլ մեծ ազդեցություն են թողնում ուսուցման, դաստիարակության և կրթության գործնական աշխատանքի վրա:

Եթե ընդհանրացնենք ունեցած դիդակտիկական համակարգերի հարստությունը, ապա կարելի է առանձնացնել նրանցից երեք գլխավորը:

• **Ավանդական համակարգ:** Այստեղ գերիշխող դեր է խաղում դասավանդումը, այսինքն դասատուի, ուսուցչի, մարզչի գործունեությունը: Այդ համակարգի ներկայացուցիչներ էին Յա.Ա.Կոմենսկին, Ի.Գ.Պեստալոցին, Ի.Ֆ.Հերբարտը, Խ.Աբովյանը, Խ.Մանդինհանը և ուրիշներ: Ավանդական ուսուցումը աշխարհի շատ երկրներում ունի նման գծեր:

Ավանդական է հանդիսանում այն դասը, այսինքն ամբողջ դասարանով միաժամանակյա պարապմունքը, որի ընթացքում ուսուցիչը հաղորդում է, տալիս է գիտելիքներ, ձևավորում է կարողություններ և հմտություններ, հենվելով նոր նյութի վրա, նրա վերարտադրումը, գնահատում է այդ վերարտադրության արդյունքները:

Ավանդական ուսուցումը առավելապես կրում է վերհիշական (ռեպրոդուկտիվ) բնույթ: Ուսուցչի աշխատանքը նախ և առաջ կողմնորոշված է գիտելիքների և գործողությունների հնարքների հաղորդմանը, այդ թվում նաև շարժողական, որոնք փոխանցվում են աշակերտներին պատրաստի կերպով:

Ամբողջ 20-րդ դարի ընթացքում սկսեցին փորձեր հայտնվել «նոր դաստիարակության» դիդակտիկական որոնումների ճանապարհով վերափոխելու ավանդական ուսուցումը: Մեր հարյուրամյակի սկզբից սկսվեց փոխվել զանգվածային ուսուցման մակարդակը: Ուղղություն վերցվեց դեպի անընդհատ կրթությունը, սովորողների համար հնարավորություններ ստեղծելով ոչ միայն պարզ ակտիվության, այլև ուսումնական գործընթացում նախաձեռնող դիրք գրավելու համար, ոչ միայն պարզապես յուրացնել ուսուցչի կողմից առաջադրվող ուսումնական նյութը, այլ ճանաչել աշխարհը, նրա հետ մտնելով ակտիվ երկխոսության մեջ, ինքնուրույն փնտրել պատասխանները: Այս միջոցով էլ տարվում են որոնումները, որոնք ուղղված են ավանդական ուսուցումը կենդանի, աշխույժ դարձնելու, շահագրգիռ դարձնելու խնդիրների լուծումը:

- **Պեդոգենտրիկ համակարգ:** Դիդակտիկայի այս համակարգը ծագեց 20-րդ դարասկզբին, որի ներկայացուցիչներն էին Դ.Դյուլին, Վ.Լայը, Գ.Կերշանշտեյները: Նախատեսում է ուսուցման գործընթացը կառուցել, ելնելով սովորողների պահանջներից, հետաքրքրասիրություններից և ընդունակություններից:

- **Ժամանակակից համակարգ:** Ուսուցման այս համակարգի ներկայացուցիչներ են հանդիսանում Կ.Ռոջերսը, Ջ.Բրուները, Լ.Ջանկովը, Վ.Դավիդովը, Պ.Գալպերինը, Պ.Պիկկասիստին, Ի.Պոլլասին և ուրիշներ:

Դիդակտիկայի ժամանակակից համակարգի հիմնական ուղղություններն են ծրագրավորված, պրոբլեմային, զարգաց-

նող, ինովացիոն, տեխնոլոգիական ուսուցումը: Ի տարբերություն ուսուցման մյուս համակարգերից, դիդակտիկական համակարգը կոչված է բավարարել հասարակության, անհատի, պետության կրթական պահանջարկները: Պահանջվում է դաստիարակել ստեղծագործական, նախաձեռնող, ինքնուրույն անհատականություն, որը ակտիվորեն մասնակցում է հասարակական և պետական բոլոր գործերին: Դա հնարավոր է միայն դպրոցի դեմոկրատացման, ավտորիտարիզմը արմատախիլ անելու դեպքում: Դեմոկրատացումը, դա մանկավարժական գործընթացում ձևականության, բյուրոկրատիզմի հաղթահարումն է:

Մյուս կողմից ուսումնական գործընթացին անհրաժեշտ է տալ մարդասիրական, առաջատար ուղղություն: Դա նշանակում է, որ ուսուցչի ամբողջ գործունեությունը ծառայում է աշակերտին, դպրոցականի անհատականության ներդաշնակ զարգացման համար ստեղծվում են առավել բարենպաստ պայմաններ: Աշակերտը դառնում է փոխկապակցված զանազան տեսակի ուսումնական, աշխատանքային, խաղային, ֆիզկուլտուրային, հասարակական գործունեության օբյեկտ: Այս ամենը նպաստում է աշակերտների մոտ սովորելու ցանկության և կարողության զարգացմանը, տարբեր հանձնարարությունների կատարմանը: Այս կապակցությամբ աշակերտների մոտ զարգանում է ինքնուրույնության զգացումը և սեփական հնարավորությունների նկատմամբ վստահությունը:

ժամանակակից դպրոցում որպես առաջնային հանդես են գալիս ծրագրերը, այն ուսումնական առարկաները, որոնք պետք է անցնել, ոչ թե անսաթվերն ու տարեթվերը, բանաձևերը, իրադարձությունները, որոնց պետք է հիշել, այլ երեխան՝ աշակերտը, նրա անհատական, հոգեկան և ֆիզիկական ունակությունները, ճանաչողական հետաքրքրությունները: Անհրաժեշտ է, որպեսզի դպրոցում 12 տարի սովորելիս, երբ աշակերտները լսում են 12 հազար դասեր, նրանք հիվանդագին

դասարան չմտնեն, թե գնահատականի համար իրենց կհարցնեն, որպեսզի ձևանմուշներ ու կաղապարներ չլինեն:

Մի շարք քաղաքակիրթ երկրներում օգտագործվում է խմբովի մտածելու հատուկ մեթոդը՝ «բրեյնսթրոմինգը»՝ մտազրոհը: Սկզբում դասարանը ծագեցնում է գաղափարներ, որից հետո քննարկում են: Ուսուցիչը խմբավարի դերում է (օրինակ, «Բրեյն-ռինգ» խաղը):

Վերջնական արդյունքում դիդակտիկայի ժամանակակից համակարգի էությունը կայանում է նրանում, որ ուսուցիչն արդեն ոչ թե դիտորդ ու խորհրդատու է, ոչ միայն աշակերտներին գիտելիքների փոխանցողն է, այլ հանդիսանում է աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպիչը, նրա գիտելիքների խթանիչը: Այլ կերպ դիդակտիկային տիպիկ է ուսուցման հիմնականում գործնականորեն կառույցը:

Ժամանակակից ուսուցման կարևորագույն գիծը նրա ուղղվածությունն է դեպի այն, որպեսզի աշակերտին նախապատրաստել ոչ միայն հարմարվողականության, այլև ակտիվորեն տիրապետել սոցիալական փոփոխությունների իրավիճակին: Այդպիսի կրթական կողմնորոշիչները 1990-ական թվականների սկզբում ստացան միջազգային ճանաչում:

### ***3.2. Ինովացիաները մանկավարժությունում: Մանկավարժական տեխնոլոգիաներ***

Մանկավարժությունն ու դիդակտիկան 21-րդ դարի դարասկզբին նոր սահմանագծերի հասան: Այստեղ հստակորեն երևում են մի շարք միտումներ:

**Առաջին: Մանկավարժության գործնական նշանակության ուժեղացում:** Հստակ արտահայտվում է տեսական և կառուցողական ֆունկցիաների միավորումը և իրացումը: Նման միացումը գիտնականների ու մանկավարժ-նորարարների կողմից հանգեցնում է նոր տեխնոլոգիաների ի հայտ

բերելուն (Շ.Ամոնաշվիլի, Վ.Դավիդով, Ս.Մախնուտով): Այդ մանկավարժական տեխնոլոգիաների հիմքում ընկած են. կամ որևէ մանկավարժական տեսություն, կամ հայացքների համակարգ, կամ որևէ մանկավարժի աշխատանքային փորձ, այդ փորձի հետագա տեսական հիմնավորմամբ, կամ ուսուցչի բացառիկ անհատական փորձ:

**Երկրորդ:** *Մանկավարժության դիֆերենցվածություն*, այսինքն նոր մանկավարժական ուղղությունների ի հայտ գալը: Օրինակ, 1950-ական թվականների և դրանից հետո հայտնվեցին ընդհանուր մանկավարժության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են տարրական դպրոցի մանկավարժությունը, բարձրագույն դպրոցի մանկավարժությունը, թատերական մանկավարժությունը, ֆիզիկական դաստիարակության և սպորտի մանկավարժությունը...: Այս ճյուղերից յուրաքանչյուրը մանկավարժությունում ունի իր առարկան, նպատակը, բովանդակությունը, ձևերը, մեթոդները, գործունեության մեթոդները: Կարելի է որոշակիորեն ասել, որ մանկավարժության դիֆերենցավորումը շարունակվում է նաև մեր ժամանակներում:

**Երրորդ:** *Մանկավարժության ինտեգրատիվ դերի ուժեղացում*: Նշանակում է, որ նա հաջողությամբ օգտագործում է մյուս գիտությունների նվաճումները: Առաջին հերթին դա ակնեռլոգիան է, որն ուսումնասիրում է մարդու զարգացման օրինաչափություններն ու մեխանիզմները՝ ստեղծագործական ներուժի գազաթնակետին հասնելու ընթացքում: Ակնեռլոգիան կանգնած է բնագիտական, հասարակագիտական և հումանիտար գիտությունների հատման կետին:

Հետևաբար, հասարակության և մարդու զարգացման հետ տեղի է ունենում նոր հասարակության կատարելագործում, նախորդի հետ համեմատ: Դա տեղի է ունենում նորամուծությունների, այսպես կոչված ինովացիաների շնորհիվ:

«Ինովացիա» հասկացությունն առաջին անգամ մանկավարժական բառապաշար մտավ 19-րդ դարի վերջին: Այդ

խնդրին անդրադառնում են մշակութաբանները, տնտեսագետները, հոգեբանները, սոցիոլոգները, մանկավարժները: Դա մշանակում է նորույթ, նորություն, փոփոխություն, մի նոր բանի ներմուծում: Ինովացիոն գործընթացները հանդիսանում են ժամանակակից ուսուցման և կրթության օրինաչափություններ:

Մարդկային գործունեության բոլոր տեսակներին՝ ինովացիաների կիրառելունը անխուսափելի է: Այդ պատճառով էլ դրանք հանդիսանում են հատուկ ուսումնասիրության, վերլուծության, ներդրման առարկա: Ինովացիաները իրենք իրենց չեն ծնվում, նրանք հանդիսանում են գիտական որոնումների, ուսուցիչների, մանկավարժական կոլեկտիվների, աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացման արդյունք: Այդ գործընթացը չի կարող լինել տարերային, այն կառավարվող է:

Մանկավարժական գործընթացում ինովացիա մշանակում է նորի ներմուծում. նպատակում, բովանդակությունում, ուսուցման և դաստիարակման ձևերում և մեթոդներում, ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության կազմակերպման մեջ: Մանկավարժական ինովացիաները մշակվում և անցկացվում են կրթության և գիտության համակարգերի աշխատողների և կազմակերպությունների կողմից: Այստեղ կարևոր մշանակություն է տրվում ոչ ստանդարտ սարքավորումների, մարզասարքերի և հատկապես, համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմանը:

Այսօր կրթության ոլորտում ներդրվում են զանազան բնույթի, ուղղվածության և մշանակության հսկայական քանակի ինովացիաներ: Դրանց թվին են պատկանում հետևյալները.

- ուսուցման մեթոդներում (օրինակ, խմբային ուսուցումը, անհատական աշխատանքի զանազան ձևերը, բրիգադային ուսուցման տեսակները, ուսուցման զարգացնող համակարգի ներդրումը և այլն),

- ուսումնական հաստատությունների սարքավորումներում և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման մեջ (ԷՀՄ, ՀՏ, ծրագրավորված ուսուցում, ՈւՏՄ, հեռուստատեսություն, վիդեոտեխնիկա և այլն),

- կրթական համակարգի կառուցվածքում (քոլեջ, գիմնազիա, բակալավրիատ, մագիստրատուրա և այլն),

- «ուսուցիչ-աշակերտ» հարաբերությունում,

- դպրոցի գործունեության ներքին կազմակերպման մեջ,

- կրթության բովանդակության մեջ (նոր ուսումնական ծրագրերի, նախագծերի, առարկաների ներմուծում և այլն):

Մանկավարժական գործունեությունում այդ նորամուծությունները պայմանավորված են մի շարք հանգամանքներով.

- սոցիալտնտեսական վերափոխումներ, որոնք պահանջում են կրթական համակարգի արմատական փոփոխություններ և նորացումներ,

- կրթության բովանդակության հումանիզացման ուժեղացում,

- նոր ուսումնական առարկաների ներմուծումը պահանջում է կազմակերպչական և տեխնոլոգիական նոր ձևեր,

- ուսուցչի գործունեության ազատություն (չկա խիստ թելադրանք, դավանանք, կաղապարներ և այլն),

- ուսումնական հաստատությունների մուտքը շուկայական հարաբերություններ նպաստում է նրա նյութատեխնիկական բազայի զարգացմանը:

Այժմ մանկավարժական ինովացիայի չափանիշների մասին: Մասնագետները դրանց թվում դասում են. նորույթը (այն, ինչ ներդրվում է), ամենաբարենպաստը (ուժի, եռանդի առավել քիչ ծախսումով սովորողները հասնում են մեծ

հաջողությունների), ուսումնական գործընթացում ինովացիայի ստեղծագործաբար կիրառման հնարավորությունը:

Այստեղ մանկավարժները (Մ.Վ.Կլարին) տարբերում են ինովացիոն մոտեցումների երկու տեսակ. տեխնոլոգիական և որոնողական:

**Տեխնոլոգիական** մոտեցումը կոչված է նորարացնել ավանդական ուսուցումը աշակերտների գերակշռող վերհիշական (ռեպրոդուկտիվ) գործունեության հիման վրա: Այս մոտեցման շրջանակներում ուսումնական գործընթացը կողմնորոշված է դեպի վերհիշական ուսուցման ավանդական խնդիրները, կառուցվում է որպես «տեխնոլոգիապես» կոնվեյերային գործընթաց հստակորեն նկարագրված և սպասվող արդյունքներով:

**Որոնողական** մոտեցումը վերափոխում է ավանդական ուսուցումը սովորողների արդյունավետ գործունեության հիման վրա, սահմանում է ուսուցման մոդելները: Ուսուցման նկատմամբ նման մոտեցման շրջանակներում նպատակը հանդիսանում է սովորողների մոտ նոր փորձի, նոր գիտելիքների և գործողությունների ինքնուրույն յուրացման հնարավորությունների զարգացումը:

Միևնույն ժամանակ, չնայած դպրոցական համակարգի, ուսումնական ծրագրերի, տարբեր երկրներում ավանդական ուսուցման մասին ընդհանուր պատկերացումների տարբերությանը, ինովացիոն գործընթացները ունեն մի շարք նմանություններ.

- դասը հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձևը: Իզուր չեն ասում, որ դասը արև է, որի շուրջը, ինչպես մոլորակները, պտտվում են ուսումնական պարապմունքների մյուս բոլոր ձևերը,

- գլխավոր գործող անձը ուսուցիչն է,
- ուսուցման վերհիշողականությունը,

• ուսուցիչների հետազոտական, ստեղծագործական մոտեցումը ուսումնական գործընթացին:

Հետաքրքիր է, որ մանկավարժների վերաբերմունքը ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը միանշանակ չէ: Այսպես, ամերիկացի հոգեբան Է.Մ.Ռոջերսը առանձնացնում է մանկավարժների հինգ խումբ.

**Նորարարներ.** առաջինն են ընկալում բոլոր նորը, համարձակորեն տարածում և ներդնում, **առաջատարներ.** նորի ընկալման գործում գնում են մյուսներից առաջ, հոժարությամբ են ստանձնում ներդրման գործը, **չափավորներ.** չեն ձգտում լինել ոչ առաջինը, ոչ էլ վերջինը, **կասկածողներ.** ընտրում են հնի ու նորի միջինը, նորին հակվում են միայն այն բանից հետո, երբ ձևավորվում է ընդհանուր կարծիք, **պահպանողականներ.** սերտորեն կապված են հնի հետ, նորը ընդունում են վերջինը:

Այստեղից կարելի է եզրահանգել, որ ընդհանուր առմամբ մասնագետների վերաբերմունքը նորարարությունների կախված է այն բանից, թե պրոֆեսիոնալ աճի որ աստիճանին է գտնվում տվյալ մանկավարժը:

Ինչ վերաբերում է ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ոլորտի մասնագետներին, ապա բոլոր ինովացիոն մոտեցումները կենտրոնացվում են բնակչության առողջության ամրապնդման, մարդկանց շարժողական պատրաստվածության վրա: Եվ բացարձակապես պատահական չէ, որ վերջին տարիներին հատուկ գրականության մեջ հայտնվեց նոր տերմին՝ առողջախնայողական գործոններ:

Այժմ **մանկավարժական տեխնոլոգիայի** էության մասին: Հայտնի է, որ մանկավարժական գիտության մեջ կարևոր տեղ է գրավում պրակտիկան, ուսուցման գործնական մասը: Երբ ասում են պրակտիկում, ապա նկատի են ունենում այս

կան այն առարկայի կան առանձին թեմայի գծով մշակված և մեթոդական ուսուցանվող պարապմունքների համակարգ:

Վերջին 25 տարիների ընթացքում մանկավարժությունում իր համար ճանապարհ է հարթում նոր կիրառական ուղղություն, նոր գիտական առարկա, որը նկարագրում է ուսուցման տեխնոլոգիան և տեխնիկան, մանկավարժական գործընթացի կազմակերպումը, ուսուցչի և ուսուցանվողի փոխհամագործակցության համակարգը: Մասնագետները փորձում են այդ գիտական առարկային անուն տալ՝ «վարպետություն»՝ «արվեստ», «տեխնոլոգիա» և այլն (Ե.Ս.Պոլատ): Բայց և այնպես քաղաքացիություն է ստանում «Մանկավարժական տեխնոլոգիա» անվանումը:

Սակայն դիտարկենք, թե ինչ է «տեխնոլոգիան» ընդհանրապես: Օրինակ, տեխնոլոգիան ցանկացած գործընթացների հավաքածու է, որը նպաստում է մեր հնարավորությունների ընդլայնմանը և թեթևացնում որոշակի խնդիրների կատարումը (Ա.Գոռ): Կամ տեխնոլոգիան գործառնությունների ամբողջություն է, որոնք իրագործվում են սահմանված միջոցով և սահմանված հերթականությամբ:

Սկզբունքորեն «տեխնոլոգիան» (հուն.) նշանակում է մշակման մեթոդներ, ինչ-որ բանի պատրաստում, ինչ-որ գործընթացում վիճակի, յուրահատկության, ձևերի փոփոխություն (օրինակ, ուսուցման):

Բայց և այնպես, ինչու՞մ է կայանում տեխնոլոգիայի էությունը:

«Մանկավարժական տեխնոլոգիան»՝ բնականաբար, օգտագործվում է ուսուցման կիրառկմամբ, իսկ ինքը տեխնոլոգիան հասկացվում է որպես ուսուցում տեխնիկական միջոցների օգնությամբ: Հետևաբար, մանկավարժական տեխնոլոգիան դա մանկավարժի գործողությունների հաջորդական համակարգ է, որն ուղղված է մանկավարժական խնդիրների

լուծմանը, նախապես ծրագրված մանկավարժական գործընթացով:

Ուսուցման տեխնոլոգիաների նախապատմությունը սկսվում է 20-րդ դարի առաջին կեսից, երբ հայտնվեցին տեխնիկական միջոցները (ՈւՏՄ), սովորողների գիտելիքների ու հմտությունների ստուգման համար: Սակայն դա չպետք է շփոթել ուսուցման տեխնիկացիայի հետ, այսինքն ուսումնական գործընթացում ՈւՏՄ-ի ներդրմամբ: Ուսուցման տեխնոլոգիական հասկացության համար հիմք են հանդիսացել տեղեկատվությունը, կիրառման տիպական և համակարգման մոտեցումը:

Ահա թե ինչու ուսուցման տեխնոլոգիան կամ մանկավարժական տեխնոլոգիան այսօր հասկացվում է որպես ուղղություն դիդակտիկայում, գիտական ուսումնասիրությունների բնագավառ, դիդակտիկական գործընթացում օպտիմալ համակարգերի մշակում:

Այստեղ հարկ է տարբերել երեք հանգուցային մեթոդների կամ մեթոդական մոտեցումներ.

- ցուցադրական մեթոդ, այսինքն այն բանի ցուցադրում, ինչն անհրաժեշտ է,

- նմանեցման մեթոդ, այսինքն ընտրվում է այն, ինչն անհրաժեշտ է,

- վարժեցում, այսինքն վարժություն, այն բանի կրկնություն, ինչն ուսումնասիրվում է:

Այս ամենը վկայում է այն մասին, որ մանկավարժական տեխնոլոգիան ապահովում է ուսումնական գործընթացի կառավարումը: Մանկավարժական տեխնոլոգիայի հիմքում ընկած են հետևյալ բաղադրամասերը.

- ինչ է նախատեսվում ուսուցանել, ուսուցման նպատակը,

- կապի ինչպիսի ձևեր են անհրաժեշտ տեղակայել ուսուցչի և աշակերտների միջև,

- ինչպիսին է ուսուցման կազմակերպման առաջատար ձևը (խմբակային, անհատական),
- ուսուցման գերիշխող մեթոդը,
- ինչպես կառավարել ուսուցման գործընթացը (ինչի օգնությամբ, օրինակ, համակարգչային տեխնիկա և այլն):

Եվ, վերջապես, հարկ է նշել, որ մանկավարժական տեխնոլոգիան իր մեջ ներառում է թատերական, արտիստական տեխնիկայի որոշ տարրեր: Յետաքրքիր է, որ շատ նմանություններ կան մանկավարժի և դերասանի, նրանց պրոֆեսիոնալ հմտությունների միջև: Մանկավարժական տեխնոլոգիան իր մեջ պարունակում է նաև այլ մասնագիտությունների համար տիպիկ տարրեր՝ մենեջերի, քաղաքագետի, իրավագետի, բժշկի, հոգեբանի, ոստիկանի:

Մանկավարժական տեխնոլոգիան փոխկապակցված է մանկավարժական վարպետության հետ: Մանկավարժական տեխնոլոգիայի կատարյալ տիրապետումն էլ հենց մանկավարժական վարպետությունն է: Մյուս կողմից, մանկավարժական վարպետությունը դա մանկավարժական տեխնոլոգիայի տիրապետման բարձրագույն մակարդակն է:

### ***3.3. Ինովացիոն տեխնոլոգիաները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության համակարգում***

#### ***3.3.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում***

Ժամանակակից ֆիզկուլտուրային կրթությունը պահանջում է գիտելիքների հարատևություն, որը չի ավարտվում բարձրագույն կրթության վկայագրի ձեռք բերմամբ: Սոցիումի զարգացման տեմպերը, մշտապես փոփոխվող պահանջներն ու հետաքրքրությունները ֆիզիկական դաստիարակության և

սպորտի ոլորտի մասնագետներին ստիպում են ձեռք բերել նորանոր գիտելիքներ, տիրապետել մարզական և առողջարարական նորագույն մեթոդիկաների և տեխնոլոգիաների:

Խոսքը գնում է ոչ թե պարզապես գիտելիքները համալրելու մակարդակի մասին, այլ անհրաժեշտ տեղեկատվությունը հայտնաբերելու ընդունակության զարգացման, այն ընկալելու, սեփական գործնական աշխատանքում ներդնելու, ինովացիոն փորձին անմիջապես արձագանքելու մասին, ինչպես նաև նախագծել, ստեղծել և փորձագիտությամբ փորձարկել ինովացիաները, կարողանալ դրանք համառությամբ ու նպատակասլացությամբ տարածել:

Այդ իսկ պատճառով ֆիզկուլտուրային ուսուցման և կրթության գլխավոր գործիքներից մեկը հանդիսանում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:

Այսօր բարձրագույն կրթության առջև ծագում են երկրի տնտեսության որակյալ մասնագետներով ընթացիկ պահանջները համալրելու, այլև համաշխարհային կրթական տարածության հետ ամբողջացման հետ կապված խնդիրներ:

Հայաստանի միավորումը Բոլոնյան գործընթացին (2005) նոր ազդակ է բարձրագույն մասնագիտական կրթության նորացմանը, լրացուցիչ հնարավորություններ է բացում մեր երկրի բուհերի եվրոպական ծրագրերին մասնակցելու, ուսանողներին և դասախոսներին՝ այլ երկրների համալսարանների, ակադեմիաների և ինստիտուտների հետ ակադեմիական փոխանակումների համար: Եվ կատարելապես արդարացված է, որ ֆիզկուլտուրային բարձրագույն կրթության համակարգում ժամանակակից իրավիճակները գործնականում համանման են ամբողջությամբ ուսուցման և կրթական համակարգում եղածին:

Համաձայն Բոլոնյան համաձայնագրի ժամանակակից պահանջներին, պրոֆեսիոնալ ուսուցման և կրթության բովանդակության կազմում, այդ թվում ֆիզկուլտուրային, պետք է

մտնեն մի շարք բաղադրիչներ: Առաջին հերթին գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մասնագետին՝ մարդկանց շարժողական ներդաշնակությունն ապահովելու համար: Երկրորդ՝ մարդու, մշակույթի, հայրենիքի մասին արժեքավոր պատկերացումները, որոնք ներգրավված են ֆիզկուլտուրային-մարզական գործունեությունում: Երրորդ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի արժեքների տիրապետման և հարստացման ուղղությամբ ստեղծագործական պրակտիկ գործունեության միջոցներն ու մեթոդները:

Անհրաժեշտ է նշել, որ ֆիզկուլտուրային ուսուցման և կրթության առարկայական բովանդակային հիմք է հանդիսանում շարժողական ակտիվության կուլտուրան որպես մարդու մոտորիկայի կուլտուրայի ուղղորդված ձևավորման գլխավոր գործոն: Դա նախատեսում է. աճող սերնդի (ֆիզիկական դաստիարակության բնագավառ) ընդունակությունների անհատական զարգացման գործընթացի կառավարում, առավելագույն զարգացում, երիտասարդության շարժողական հնարավորությունների առավելագույն տիրապետումն ու արդյունավետ օգտագործումը (սպորտային մարզման բնագավառ) և բնակչության առողջության և աշխատունակության ֆունկցիոնալ վիճակի օպտիմալացման (ֆիզիկական կուլտուրայի բնագավառ):

Մեր կարծիքով, ֆիզկուլտուրային կրթության տեղեկատվությունը պետք է ուղղված լինի երկու հիմնական նպատակների նվաճմանը. առաջինը՝ մասնագետների պատրաստում, հասարակայնության տեղեկատվայնության պայմաններում հետագա պրոֆեսիոնալ գործունեության համար և երկրորդ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիման վրա, ուսուցման տեխնոլոգիաների կատարելագործման միջոցով մասնագետների պատրաստության մակարդակի բարձրացում:

Այդ դրույթների իրացման համար ներկա ժամանակում անհրաժեշտ է. տեղեկատվության, որպես գիտական առարկայի, հիմնական հասկացությունների և մեթոդների մասին տեսական գիտելիքների ընդհանրացում և խորացում, համակարգչի հետ աշխատանքի կարողությունների ու հմտությունների ձևավորում, պրոֆեսիոնալ գործունեության մեջ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրում և կիրառման մեթոդների տիրապետում:

Արդեն հիմա ընդգծվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գծով մասնագետների պրոֆեսիոնալ գործունեության մեջ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական ուղղությունները: Դրանց կարելի է վերագրել. զանազան սպորտային-մանկավարժական առարկաների, տեսական առարկաների ցիկլերի, ֆունկցիոնալ դիագնոստիկայի ավտոմատացված մեթոդների գծով գիտելիքների ստուգման ծրագրերի ստեղծումը և օգտագործումը:

Այսպիսով, ֆիզկուլտուրային պրոֆեսիոնալ կրթության տեղեկատվածությունը մասնագետների պատրաստման մասնագիտական որակների և մակարդակի նկատմամբ նոր պահանջներ է ներկայացնում:

### ***3.3.2. Ինովացիոն ուղղությունները ֆիզկուլտուրային բարձրագույն կրթությունում***

Մեթոդաբանական մոտեցումներից մեկը, որը հնարավորություն է տալիս վերափնաստավորել Հայաստանում ֆիզկուլտուրային կրթության ժամանակակից վիճակը և նշել դրա նորացման ուղիները, հանդիսանում է ինովացիոն գործունեությունը: Ինովացիայի չափանիշներ պետք է լինեն գիտական նորույթն ու գործնական մարմնավորումը:

Այսօր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում կուտակվել է ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաների

որոշակի պահուստ՝ սպորտային կողմնորոշող ֆիզիկական դաստիարակություն, օլիմպիական կրթություն, վալեոլոգիական դաստիարակություն և այլն:

Սրանք և մյուս տեխնոլոգիաները պետք է կրեն դիֆուզային բնույթ, ինչը թույլ է տալիս խոսել պրակտիկ գործունեության մեջ նոր գիտելիքների մարմնավորման մասին, նաև այն, թե ինչից է էականորեն կախված ինովացիոն գործընթացի հաջողությունը և ֆիզկուլտուրային կրթության նորացումն ամբողջությամբ: Ինովացիոն գործընթացներին ուսուցման մեջ գիտության և պրակտիկայի միավորումը թույլ է տալիս ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կրթական գործընթացը դարձնել ապագա մասնագետների իրապես պրոֆեսիոնալ պատրաստություն:

Նման խնդիրների հաջող լուծումը հնարավոր է բուհի շրջանավարտի զարգացած մեթոդաբանական կուլտուրայի և գիտական որոնումներին ու գիտահետազոտական գործունեությանը նրա պատրաստվածության պայմաններում: Մեթոդաբանական կուլտուրան, բնականաբար, իր մեջ ներառում է նաև տեղեկատվական կուլտուրան: Դա ժամանակակից մասնագետի ձևավորման երկմիավորված գործընթաց է:

Այսօր, մեր կարծիքով, հարկ է խոսել կրթական զանազան հաստատությունների (հանրակրթական դպրոց, քոլեջ, բուհ, մարզական դպրոց) ղեկավարների, ուսուցիչ-առարկագետների, բարձրագույն դպրոցի դասախոսների և այլոց մեթոդաբանական կուլտուրայի յուրահատկության մասին:

Այս կապակցությամբ կարևորվում է ինովացիոն բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության մոդելի կառուցման մասին: Տվյալ մոդելը պետք է պարունակի ընտրված մասնագիտության ուսուցման փուլերը: Առաջին փուլում կառուցվում են առարկայական գիտելիքների և մասնագիտական տեխնոլոգիաների փոխկապակցությունները, ձևավորվում է ինովացիոն մտածողությունը: Երկրորդ փուլում ձևավորվում են նոր

գիտելիքներն ու կարողությունները, ուսումնասիրվում են ուսուցման որակի բարձրացման վրա ազդող ինովացիոն տեխնոլոգիաները: Երրորդ փուլում ուսումնասիրվում է գիտական և ինովացիոն մեթոդաբանությունը՝ գործնականում հետազակիրառնամբ: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գծով նոր կերտվածքի մասնագետի ձևավորման գործընթացում շատ կարևոր պահ է մասնագիտական կայացման որակի փոփոխության հանգամանքի, տվյալ առարկայական ոլորտում մասնագիտական ձեռնհասության և մասնագիտական ինովացիոն մտածողության հաշվարկը:

Մասնագիտական կրթություն ստանալու արդյունքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի մասնագետը պետք է *գիտենա*. ոլորտում ինովացիոն տեխնոլոգիաների բովանդակությունը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ինովացիոն ուսուցման ձևերն ու մեթոդները, տեխնոլոգիաների բժշկականսաբանական, հոգեբանա-մանկավարժական և սոցիալ-մշակութային հիմունքները: Միաժամանակ շրջանավարտը պետք է *կարողանա*. պլանավորել, կազմակերպել և անցկացնել պարապմունքներ ինովացիոն տեխնոլոգիաների օգտագործմամբ, պարապմունքների ընթացքում կիրառել ֆիզիկական դաստիարակության ժամանակակից միջոցներ ու մեթոդներ, վերլուծել և հղկել իր մասնագիտական գործունեությունը, անցկացնել գիտական ուսումնասիրություններ:

Այսպիսով, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում մասնագետների պրոֆեսիոնալ պատրաստության նորացման գործընթացը ներգծված է ժամանակակից փուլում Հայաստանի կրթական քաղաքականության ընդհանուր ռազմավարության մեջ: Այստեղ առաջնային խնդիր է հանդիսանում ուսուցման և կրթության անհրաժեշտ որակի հասնելը, նրա համապատասխանությանը անհատի, հասարակության և պետության հրատապ և հեռանկարային պահանջներին:

Այժմ համառոտ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղրտում գոյություն ունեցող և ներդրմանը ենթակա ին-վացիոն ուղղությունների մասին:

**ԱՆՁՆԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-ԹՅՈՒՆ:** Նրա փորձի տիրապետումը սկսվեց 1990-ական թթ.: Սկզբունքորեն այն բաց, մարդասիրական, իմքնագարգացվող կրթական տեխնոլոգիա է, հիմնված ժամանակակից գիտական մոտեցումների վրա: Այն հանդիսանում է ժամանակակից ման-կավարժության օրինակներից մեկը, երբ սովորողի մոտ ձև-վորվում են ճանաչողական միտումները և ընդունակու-թյունները:

Անձնակողմնորոշիչ ֆիզիկական դաստիարակության բնորոշ գծերը.

- կողմնորոշում է դեպի մարդը (երեխա), որպես ու-սուցման և կրթության գլխավոր նպատակ և արժեք (արժե-քաբանական մոտեցում),
- աջակցում և զարգացնում է մարդու անձնական յու-րահատկությունները և անհատականությունը (անձնական մոտեցում),
- սովորողների մոտ ծնում է ուսման և կյանքի անձ-նական մտքեր (մշակութաբանական մոտեցում),
- արթնացնում է անհատի ստեղծագործական ներուժ (գործնական մոտեցում),
- խթանում է աշակերտներին սեփական խնդիրների ինքնուրույն լուծման (սիներգետիկ մոտեցում):

**ՄՊՈՐՏԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱ-ՐԱԿՈՒԹՅՈՒՆ:** Այս ուղղության էությունը ֆիզկուլտուրային-մարզական պարապմունքների տարբերակների ընտրության ազատության ապահովումն է.

- մարզում ընտրված մարզաձևից,
- պարապմունքներ ընդհանուր ֆիզիկական պատ-րաստության խմբակներում,

- առողջարարական և ադապտացված ֆիզիկական կուլտուրա:

Նման պարապմունքներ կարելի է անցկացնել սկսած 10 տարեկան հասակից:

**Պրոֆիլային կրթություն:** Այս ուղղությունը այլ կերպ անվանվում է «մանկավարժական ուղեկցում», այսինքն ուսումնադաստիարակչական գործընթացի այնպիսի պայմանների, նրա կազմակերպման այնպիսի ձևերի ստեղծում, որոնք երեխաներին ու դեռահասներին կտան հնարավորություն ավելի հստակ կողմնորոշվել մասնագիտություն ընտրելիս (ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի, սպորտային մարզչի, առողջարարական և ադապտացված ֆիզիկական կուլտուրայի մասնագետի): Նման մոտեցումը պետք է ապահովի սովորողների պատրաստությանը ռազմական ուսումնական հաստատություն ընդունվելու համար: Այդ իսկ պատճառով չի բացառվում, որ պրոֆիլային կրթությունը հնարավոր լինի անվանել պաշտպանամարզական պատրաստություն:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ՂԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ «ՍՊՈՐՏԱՅՆԱՑՈՒՄԸ»:** Այս նախագիծը նպատակ ունի մարզական-առողջարարական ուղղվածությամբ հիմնական և լրացուցիչ կրթության ամբողջացում շաբաթը 6 ժամ պարապմունքների միջոցով: Ըստ որում երեք դասը նվիրվում է ֆիզկուլտուրային պարապմունքներին և էլի երեք ժամ մանկապատանեկան մարզադպրոցում սպորտով պարապմունքներին: Նախատեսվում է, որ յուրաքանչյուր դպրոց այս կամ այն մարզածկից ունենա հավաքական թիմ և պարտադիր մասնակցի մրցումների:

**ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ:** Ժամանակակից օլիմպիական շարժումն ունի մեկ դարից ավելի պատմություն, որի հիմնական խնդիրը բնակչության լայն խավերին հաղորդակից դարձնելն է օլիմպիզմի մարդասիրական իդեալներին և մշակութային արժեքներին: Օլիմպիական շարժման ուղղություններից մեկը օլիմպիական կրթությունն է, որը ձեռք է բերել

աճող սերնդի ուսուցման և դաստիարակության առանձնահատուկ հրատապություն: Այսօր աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում իրացվում են օլիմպիական կրթության ծրագրեր, որոնցում հիմնավորված է դաստիարակչական և ուսումնական աշխատանքում օլիմպիզմի իդեալների և արժեքների օգտագործման անհրաժեշտությունը, հրատարակվել են հատուկ ուսումնական ձեռնարկներ:

Մանկավարժական գործունեության գլխավոր խնդիրն այստեղ կայանում է սովորողների մոտ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համալիրի ձևավորումն ու կատարելագործումը: Այս նպատակով, օլիմպիական կրթության համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ է, որ այդ աշխատանքին ներգրավվեն ոչ միայն ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներն ու մարզիչները, այլև հանրակրթական մյուս առարկաների դասատուները, միջառարկայական կապերի ձևավորման հիման վրա:

Բացի դրանից, ներկա ժամանակում ԱՊՀ երկրներում ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ոլորտում փորձարկվում են մի շարք ինովացիոն նախագծեր: Դրանց վերաբերում են. սպորտային մարզումներում զենային ինժեներիայի ներդրումը, պարապմունքների գործընթացում զենդերային տարբերությունների ուսումնասիրությունը, կանանց մարզումների գիտամեթոդական հիմունքների մշակման խորացումը, սկսած նախադպրոցական կրթական հաստատություններից, տեսական պատրաստության ուժեղացումը, ուսումնական ծրագրերում նոր գիտական առարկաների ներդրումը և այլն:

Եվ, վերջապես, խոսելով ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության բնագավառում ինովացիոն գործընթացների մասին, չի կարելի շրջանցել այս կապակցությամբ ստացված մի շարք նոր հասկացությունների և տերմինների քաղաքացիության իրավունքը: Այսպես, «սպոր-

տաբանություն» տերմինը նշանակում է գիտություն սպորտի, մարզական պատրաստության մասին իր բոլոր կողմերով (մանկավարժություն, հոգեբանություն, ֆիզիոլոգիա, սոցիոլոգիա, մենեջմենթ, էկոնոմիկա և այլն), «ազոնոլոգիա» (պայքարաբանություն) տերմինը նշանակում է գիտություն մրցակցային գործունեության, վիճակի, մրցակցության մասին, «դեոնտոլոգիա» տերմինը ուսմունք է պարտքի մասին մարզական առումով, իր խմբի, թիմի, ազգային հավաքականի առջև պարտքի մասին:

1990-ական թթ. սկզբում ֆիզկուլտուրային-մարզական պրակտիկայում ծագեց «կենսամանկավարժություն» տերմինը: Այստեղ հասկացվում է, որ ցանկացած ֆիզիկական վարժության կատարումը կապակցված է մարզիկի ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, հոգեբանական և կենսամեխանիկական հնարավորությունների հետ:

21-րդ դարասկզբին սկսեց ծագել նոր կիրառական գիտական ուղղություն՝ «բիոկիբերագոգիկա»՝ գիտություն, որը կապված է շարժողական գործողություններին մարդու ուսուցման տեսության ուսումնասիրության հետ: Այս տեսության հիմքում ընկած են շարժումները կառավարող նյարդակոորդինացիոն գործընթացները:

### **ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

1. Որոնք են ուսուցման ավանդական համակարգի բնորոշ գծերը: Նշեք այդ համակարգի ներկայացուցիչներին:

2. Նկարագրեք երեք գոյություն ունեցող դիդակտիկ համակարգերի էությունը և նրանց տարբերիչ կողմերը:

3. Որոնք են ժամանակակից դիդակտիկ համակարգի սկզբունքային առանձնահատկությունները:

4. Ինչպիսի նմանատիպ գծեր ունեն ինովացիոն գործընթացները տարբեր երկրներում:

5. Ինչու համար ինովացիաները համարում են ժամանակակից ուսուցման և կրթության օրինաչափ երևույթ:

6. Նկարագրեք ինովացիոն երևույթները, որտեղ են նրանք դրսևորվում:

7. Բացահայտեք տեխնոլոգիական և որոնողական ինովացիոն մոտեցումների տարբերությունները:

8. Ինչում է կայանում մանկավարժական տեխնոլոգիայի էությունը և նրա բաղադրիչները:

9. Բացահայտեք ուսուցման տեխնոլոգիայի իմաստը:

10. Ինչով են տարբերվում «ուսուցման մեթոդիկա» և «ուսուցման տեխնոլոգիա» հասկացությունները:

11. Բացահայտեք ինչում է կայանում ֆիզկուլտուրային կրթության ինֆորմատիզացիան և մոդերնիզացիան: Նրանց իրականացման ուղիները:

12. Ինչով էք կարևորում ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում:

13. Նկարագրեք անձնակողմնորոշիչ և սպորտային կողմնորոշիչ ուղղությունները ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

14. Ինչում է կայանում ֆիզիկական դաստիարակության «սպորտայնացումը»:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԽՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**Բալյան Ա.Ա.** Մանկավարժական վարպետության հիմունքները.-Երևան.-Լույս.-1988.-176 էջ

**Մանուկյան Ա.Մ., Մանուկյան Մ.Մ.** Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա.-Երևան.-Ձանգակ.-2000.-131 էջ

**Մարմարյան Յու. և համ.** Բոլոնյան գործընթաց՝ բարեփոխումներ և ռազմավարություն.-Երևան.-ՀՊԱՀ.-2007.-219 էջ

**Պետրոսյան Հ.Հ.** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ.-Երևան.-ԱՆ-ՁՈՆ.-2008.-211 էջ

**Պետրոսյան Ջ.Ջ.** Մասնագիտական կրթության չափաբերման և որակի արժեւորման հարցեր.-Երևան.-ԱՆ – ՋՈՆ.-2008.-132 էջ

**Սարգսյան Յու.Լ., Բուդաղյան Ա.Ս.** Բոլոնիայի գործընթացը Հայաստանում.-Երևան.-Անտարես.-2008.-74 էջ

**Бальсевич В.К., Лубышева Л.И.** Информационная культура специалиста как фактор внедрения новых технологий в практику физической культуры и спорта// Теория и практика ФК.-2001.-N 12.-с. 18-20

**Бальсевич В.К., Лубышева Л.И.** Спортивно ориентированная физическая культура // Теория и практика ФК.-2003.-N 5.-с. 19-22

**Кларин М.В.** Педагогическая технология в учебном процессе.-М.: Знание.-1989.-71 с.

**Кларин М.В.** Инновации в мировой педагогике.-М.-Рига.-Пед. центр Эксперимент.-1998.-180 с.

**Ожегов С.И.** Словарь русского языка.-М.: Русский язык.-1984.-с. 243

**Полат Е.С.** Новые педагогические и информационные технологии в системе образования.-М.: Академа.-1999.-224 с.

**Сальникова Т.П.** Педагогические технологии.-М.: Творческий центр.-2007.-128 с.

**Федоров А.И.** Современные информационные технологии в физической культуре и образовании.-Челябинск: УГАФК.-1998.-44 с.

**Шуркова Н.Е.** Практикум по педагогической технологии.-М.:Пед. общество.-1998.-250 с.

## ԳԼՈՒԽ 4.

### ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ\*

#### *4.1 Համակարգչային տեխնիկայի կիրառման առանձնահատկությունները ուսումնական գործընթացում*

Վերջին ժամանակաշրջանը բնութագրվում է տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց զարգացմամբ, նրանց ակտիվ ներդրմամբ մարդկային գործունեության բոլոր բնագավառներում, որը հանգեցնում է այդ ոլորտների մոդերնիզացմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում համակողմանի փոփոխություններ են տեղի ունենում նաև կրթության մակարդակով, ուր ընթանում է կրթական համակարգի վերակառուցում, որը կողմնորոշված է մուտք գործելու համաշխարհային տեղեկատվական-կրթական տարածք: Կրթությունը որպես կարևոր սոցիալական ինստիտուտ (քանի որ այստեղ է տեղի ունենում անհատի ձևավորումը) որոշում է հասարակության մտավոր, հոգևոր, բարոյական, գեղագիտական, տնտեսական ներուժը, նախագծում քաղաքակրթության ուղին, ինչպես նաև իր վրա փորձարկում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների (ՆՏՏ) ազդեցությունը, որը բերեց նրա բովանդակության և ֆունկցիաների հիմնավորված փոփոխության:

Կրթական համակարգի կատարելագործումը և ուսուցման ակտիվ մեթոդների զարգացումը անհնար է պատկերացնել առանց ուսուցման և դաստիարակության գործընթացի:

---

\* Ձեռնարկի այս գլուխը մեր խնդրանքով պատրաստել է իրագեկ մասնագետ Ա.Գ. Ստեփանյանը

ցուն նոր մանկավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք ուղղված են բարձրացնելու ուսուցման գործընթացի արդյունավետության մակարդակը:

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների թափանցումը կրթության ոլորտ մանկավարժներին, այդ թվում նաև մարզիչ-մանկավարժներին հնարավորություն է տալիս որակապես փոխել ուսուցման բովանդակությունը, մեթոդները և կազմակերպման ձևերը: (Ա.Յարությունյան, 2003; Ա.Գ. Ստեփանյան 2006, И.В. Родерт, 2001 և այլք):

ՆՏՏ միջոցներում առանձնահատուկ տեղ է գրավում, հատկապես ուսումնական գործընթացում, համակարգչային տեխնիկան, որի կիրառման հիմնախնդիրը վերջին ժամանակաշրջանում մեծ հետաքրքրություն է առաջացնում մանկավարժական գիտությունում: Ուսուցման համակարգչային տեխնոլոգիաների լուծման գործում մեծ ներդրում ունեն նաև հայ գիտնականները, որոնց հետևողական աշխատանքի շնորհիվ հատկապես անցած տաս տարիների ընթացքում համակարգչային տեխնոլոգիաներն ուսումնական գործընթացում հասան որակական նոր մակարդակի: Դրա վկայություններն են տարբեր ուսումնական առարկաների մոդելի վրա անցկացված բազմաթիվ աշխատանքների արդյունքները (Ա.Յ. Եսայան և համահեղ. 2003, 2004, 2005; Վ. Հակոբջանյան 2003; Մ. Աստվածատրյան և համահեղ., 2004 և այլք):

Ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներին բնորոշ առանձնահատկություններից մեկը հանդիսանում է տեղեկատվության միասնականացումը (ունիֆիկացումը), ըստ որի համակարգիչները հնարավորություն ունեն միևնույն տեղեկատվությունը ներկայացնել անհիմացիոն, գրաֆիկական, տեքստային, տեսաձայնային և մուլտիմեդիա արտադրանքի տեսքով:

Ուսումնական գործընթացում համակարգչի կիրառման շնորհիվ առաջանում են հետևյալ արդյունավետ պայմանները.

- ապահովվում է ուսումնական գործընթացի հետադարձ կապը;

- ապահովվում է ուսումնական գործընթացի անհատականությունը;


- բարձրանում է ուսումնական գործընթացի զննականությունը;

- հնարավորություն է ստեղծվում մոդելավորել ուսումնասիրվող երևույթները;


- հնարավորություն է ստեղծվում ուսուցանվող օբյեկտի մասին տեղեկատվությունը ինչպես սեղմել, այնպես էլ ընդլայնել:

Հարկ է նշել, որ դիդակտիկայի զարգացման ժամանակակից փուլում համակարգչային տեխնիկան ուսուցման գործընթացում կիրառելով սովորողներին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ սեփական նախաձեռնություններով: Եթե համակարգչային լսարանը հնարավորություն ունի ինտերնետին միանալու, ապա դրանից օգտվող ուսանողների մոտ շատ ավելի լավ են զարգացած տեղեկությունների կառավարման՝ տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու, ինչպես նաև հաղորդակցման ու մտքերի ներկայացման կարողությունները:

Ժամանակակից դիդակտիկայում համակարգիչն ուսումնական գործընթացում կիրառվում է մի շարք ուղղություններով (նկար 8) և այդ գործընթացում ունի մի շարք աշխատանքային ձևեր (նկար 9):




**Նկար 8. Համակարգչի կիրառման ուղղությունները ուսումնական գործընթացում:**



**Նկար 9. Համակարգչային տեխնիկայի աշխատանքնային ձևերը ուսումնական գործընթացում:**

Համակարգչային ուսուցման ժամանակ ի տարբերություն ավանդական ուսուցման ընթացքում լուծվում են հետևյալ մանկավարժական խնդիրները (նկար 10):



**Նկար 10. Համակարգչային ուսուցման ժամանակ իրացվող մանկավարժական խնդիրները:**

Այսօր մասնագետները (Մ. Աստվածատրյան և համահեղ., 2004; В.П. Беспалько, 1989; А.А. Андреев, 1995 և այլք) տարբերում են համակարգչային ուսուցման ընթացքում ուսումնական նյութի յուրացման հետ կապված գործունեության հետևյալ փուլերը: **Առաջին փուլ.** ընկալումը, երբ սովորողը մոնիտորի միջոցով ուշադրությունը կենտրոնացնում է տեղե-

կատվության տարբեր օբյեկտների վրա: **Երկրորդ փուլ.** իրավիճակի ճանաչման ուղղությամբ հուշարարական (էվրիստիկ) գործունեություն, նշանային մոդելի ստեղծում և առաջադրված խնդրի լուծման համար ալգորիթմի որոնում: **Երրորդ փուլ.** մոդելի փոխակերպման և նոր գիտելիքների ստացման նպատակով վերարտադրական գործունեություն: Տվյալ դեպքում, մասնագետների կարծիքով, համակարգչային ուսուցման ժամանակ ուսումնական գործունեության բաղադրամասեր են հանդիսանում ուսումնական առաջադրանքը, ուսուցման համակարգը, յուրացվող առարկաների բովանդակության մոդելավորումը, ինքնագնահատման ու վերահսկման մոդելի և գործողության փոխակերպումը:

Ինչպես ընդհանուր, այնպես էլ սպորտային մանկավարժությունում մեծ խնդիր է ներկայացնում համակարգչային ուսուցողական ծրագրերի մշակումը: Նման պարագայում կարող են առաջանալ հետևյալ խնդիրները. ինչպես մշակել ուսումնական առարկան նրա համակարգչայնացման համար, ուսումնական նյութի որ բաժինը և ինչ ձևով ներկայացնել ու իրացնել, ինչպես իրականացնել գիտելիքների ստուգումը և գնահատումը, ինչպես և ինչպիսի տեխնոլոգիաներ կիրառել առաջադրված մանկավարժական և դիդակտիկ խնդիրների իրացման համար:

Նման ուսուցողական ծրագրերը պետք է մշակվեն դասական դիդակտիկ սկզբունքների հաշվառումով: Այսպես, համակարգչային ուսուցման ընթացքում մատչելիության սկզբունքը համընդհանուր մատչելիության սկզբունքից անցնում է անհատական մատչելիության սկզբունքի: Այն ստանում է ուսուցման բովանդակության զտիչի դեր և, ի վերջո, ապահովում է սկզբնական պատրաստվածության տարբեր մակարդակներ ունեցող սովորողներին հասնել ուսման նպատակներին:

Համակարգչային ուսուցման ընթացքում մեծ է նաև գննականության սկզբունք դերը, որը անվանվում է նաև

«ինտերակտիվ զննականություն» (В.П. Беспалько, 1989; Е.С. Полат, 1997 և այլք): Այս սկզբունքը թույլ է տալիս տեսնել այն, ինչը միշտ չէ, որ իրական կյանքում կարելի է տեսնել:

Համակարգչային ուսուցման ժամանակ անհրաժեշտ է հստակ օգտագործել սիստեմայնության և հաջորդականության սկզբունքները: Այն հեղինակները, ովքեր օգտագործում են ուսուցման նորագույն տեխնոլոգիաները, հաջորդականության սկզբունքն ապահովելու համար ուսուցման առաջին ցուցահերթի սկզբում առաջարկում են գործողության կողմնորշիչ, մոտավոր հիմք: Ընդ որում, անկախ սովորողին դեպի նպատակը տանող բարդությունից և ուղուց, դա կատարվում է սիստեմատիկ և հետևողականորեն: ՌԻստի, հաջորդականության սկզբունքն համակարգչային ուսուցման ընթացքում ստանում է իր յուրահատուկ իմաստը, որի տակ պետք է հասկանալ հենց սովորեցնող ծրագրի ուսումնական հատվածները տալու հերթականությունը (Ա.Յ. Եսայան և համահեղ., 2003, 2004, 2005; С.Н. Добрынин, 2002 և այլք):

Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության համակարգչային ուսուցման գործընթացում առավելապես ընդգծվում են հետևյալ առաջատար դիդակտիկ սկզբունքներ՝ ուսուցման անհատականացումը և սովորողների ակտիվությունը, ինչպես նաև ուսուցման մատչելիությունը և զննականությունը:

Համակարգչային ուսուցողական ծրագրերի ստեղծման և կիրառման ժամանակ որպես կանոն անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հիմնական բաղադրիչները՝

- **Հոգեբանական** - ինչպես կներգործի տվյալ ծրագիրը սովորողի դրդապատճառների վրա, կբարձրացնի թե կնվազեցնի հետաքրքրությունը ուսուցանվող առարկայի հանդեպ, արդյոք ծրագրային դժվարությունները չեն հանգեցնի անվստահություն դեպի սեփական ուժերը:

- **Մանկավարժական** - համակարգչային ուսուցողական ծրագիրը ինչքանով է համապատասխանում ուսուցանվող առարկայի ուսումնական ուղղվածությանը, նպաստում է արդյոք սովորողների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ ճիշտ պատկերացումների ձևավորմանը:

- **Մեթոդական** - արդյոք ճիշտ են մատուցվում ուսումնական նյութերը և ուսուցողական ծրագիրը նպաստում է ուսումնական նյութի լիարժեք յուրացմանը, ինչպես նաև արդարացված է նախատեսվող առաջադրանքները:

- **Կազմակերպչական** - արդյոք ռացիոնալ է պլանավորված համակարգչային և ավանդական ուսուցման համակցումը, արդյոք բավարար է այն ժամանակը, որը հատկացված է սովորողների համակարգչային ուսուցման, գնահատման կամ ինքնուրույն աշխանքների համար:

Ստորև ներկայացնում ենք համակարգչի ներդրման իրական հնարավորությունները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում:

#### ***4.2 Համակարգչային տեխնիկայի կիրառման հնարավորությունները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում***

Արդի պայմաններում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումը դառնում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի մասնագետի պրոֆեսիոնալ պատրաստության հիմնական բաղադրիչներից մեկը:


Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում համակարգչային տեխնիկայի ներդրումը ենթադրում է ուսումնական նյութի պասիվ մեթոդներով յուրացումից անցում դեպի անհատական և խմբային աշխատանքի ակտիվ մեթոդների:

Համակարգիչները որպես տեղեկատվական տեխնոլոգիաների կարևոր բաղադրամաս, դրանց ներդրումը ֆիզկուլտուրային կրթության գործընթաց, շնորհիվ իրենց տեխնիկական պոտենցիալի և դիդակտիկ հնարավորությունների ֆիզիկական դաստիարակության ժամանակակից մանկավարժին հնարավորություն կտան ավելի արդյունավետությամբ բացահայտել և ներկայացնել ուսումնական նյութը, առավել ռացիոնալ և օբյեկտիվ գնահատել մարզվողների գիտելիքների մակարդակը, զարգացնել սովորողների ճանաչողական գործունեությունը, տեսական և գործնական միտքը, ինչպես նաև ուսուցումը կազմակերպել մարդկանց տարբեր տարիքային խմբերում և այդ գործընթացը կառուցել համապատասխան ուսուցանվողների հետաքրքրությունների ու նրանց ընկալման աստիճանը հաշվառելով:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում բազմաթիվ են այն հարցերը (ուսուցանվող ֆիզիկական վարժության տեխնիկան, հայտնի մարզիկների մարզական կենսագրությունը, պատմական փաստերը, երևույթները և այլն), որոնց ճշգրիտ, բազմակի և անմիջական ներկայացումը կարող է առավել արդյունավետ ներգործել ուսանողների ընկալողական զգայարանների վրա, սակայն դա լիարժեք հնարավոր չէ իրագործել ավանդական ուսուցման ժամանակ: Այդ նպատակով ժամանակակից ուսուցիչ-մարզիչին օգնության է գալիս համակարգչային տեխնիկան իր բոլոր հնարավորություններով՝ սլայդներ, նկարներ, անիմացիաներ, մուլտիմեդիա արտադրանք, որոնք սովորողների մոտ նպաստում են ձևավորել կերպարային պատկերացումներ, իսկ դրանց հիմքում՝ ուսուցանվող նյութի գիտակցված ընկալում: Ընդ որում սլայդների, անիմացիաների և ցուցադրական այլ նյութերի հետ աշխատանքի արդյունավետությունը ավելի բարձր կլինի, եթե դրանք զուգակցվեն ավանդական ուսուցման հետ: Այսպես համակարգչային տեխնիկայի միջոցով իրացվող դասերը չպետք է նախա-

տեսեն հարյուր տոկոսանոց ժամանակի օգտագործում համակարգչով աշխատելիս: Առաջատար նշանակությունը պետք է տրվի երկխոսությանը՝ զուգակցելով խոսքը մոնիտորի վրա ցուցադրվող նյութի հետ: Այս բոլորը ներդաշնակ և համակողմանի պայմաններ են ստեղծում ֆիզիկական դաստիարակության տեսական գիտելիքների առավել արդյունավետ յուրացման և ակտիվացման, ինչպես նաև ուսուցանվող նյութի դիմամիկ ու տպավորիչ արտահայտման համար:

Նկար 11-ում պատկերված է համակարգչային ուսուցման դասի կարգը, որը իրացվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսումնական գործընթացում:



**Նկար 11. Համակարգչային ուսուցման կարգը**

Այսպիսի մոտեցմամբ ապահովվում է ուսուցման զննողականությունը, հետադարձ կապը և անհատականացումը:

Տեղեկատվայինացման գործընթացից զերծ չպետք է մնա նաև հանրակրթական դպրոցում դասավանդվող «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացը, որի համար կարևոր նախապայման է հանդիսանում առարկայից քննության ներդրումը, որը առավել բարձրացրեց տեսական գիտելիքների դերը և նշանակությունը: Ֆիզիկական կուլտուրայի դասը ընդգրկում է մեծ ծավալի տեսական նյութ, որի համար տրվում է մինիմալ քանակի դասաժամեր: Այս հիմնախնդրի լուծման համար հիանալի միջոց կարող է հանդիսանալ համակարգչային տեխնիկան՝ մասնավորապես համակարգչային թեստերը և էլեկտրոնային պրեզենտացիաները (շնորհանդեսներ)՝ պատրաստված Microsoft Power Point ծրագրով:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցման համար համակարգչային ուսուցողական ծրագրերը կարող են բովանդակել լայնածավալ տեսական նյութ: Սակայն պետք է հիշել, որ դրույթները, հասկացությունները ավելի հեշտ են ընկալվում, երբ դրանք մատուցվում են կոնկրետ փաստերով, օրինակներով, կերպարներով: Ելնելով նշվածներից անհրաժեշտ է կիրառել ուսումնական նյութի ցուցադրման տարբեր տեսակներ: Առանձնապես նման ծրագրեր պատրաստելիս անհրաժեշտ է տեքստային տեղեկատվությունը հասցնել մինիմալի, դրանք փոխարինելով սխեմաներով, դիագրամաներով, նկարներով, անիմացիաներով, ֆիլմերի դրվագներով, մուլտիմեդիա արտադրանքով:

Ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում կիրառելով համակարգչային թեստավորման ծրագրեր հնարավորություն է ստեղծվում օբյեկտիվ գնահատել սովորողների տեսական գիտելիքների մակարդակը: Ուսումնական գործընթացում կիրառելով նման ծրագրեր օգտվում է ոչ միայն ուսուցիչը, որը ազատվում է բազմաթիվ տետրեր ստուգելու ծանձրալի գործընթացից, այլ առաջին հերթին աշակերտները, որովհետև

համակարգիչը միշտ անկախ և օբյեկտիվ է իր գնահատականներում:

Նման մոտեցումները կիրառելի է նաև մանկապատանեկան մարզադպրոցներում:

Ուստի կարելի է եզրահանգել, որ համակարգչային տեխնիկան կիրառելով ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում հնարավորություն է տալիս ներդնել հիմնավորված փոփոխություններ, իրականացնել անհատական և տարբերացված ուսուցում, ինչպես նաև հավաստի գնահատել ուսուցման որակը և ղեկավարել այն:

### **ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

1. Ինչով է պայմանավորված կրթության ոլորտի տեղեկայնացումը:

2. Բնութագրեք նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները:

3. Առանձնացրեք նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները:

4. Ինչ ուղղություններով կարելի է կիրառել համակարգիչը ուսումնական գործընթացում:

5. Որոնք են ուսումնական գործընթացում համակարգչային տեխնիկայի աշխատանքային ձևերը:

6. Վերլուծեք մանկավարժական խնդիրները, որոնք իրացվում են համակարգչային ուսուցման ժամանակ:

7. Բնութագրեք համակարգչային ուսուցման ընթացքում ուսումնական նյութի յուրացման հետ կապված գործունեության փուլերը:

8. Դիդակտիկայի որ սկզբունքներն են առավելապես կիրառվում համակարգչային ուսուցման ընթացքում:

9. Ինչ գործոններով է պայմանավորված համակարգչային տեխնիկայի կիրառման արդյունավետությունը ֆիզիկո-տուրային կրթության գործընթացում:
10. Նշեք համակարգչային տեխնիկայի կիրառման առանձնահատկությունները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում:
11. Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում կիրառելով համակարգչային տեխնիկա ինչպիսի հնարավորություններ են բացվում ուսուցիչ-մարզիչի և աշակերտ ու պատանի մարզիկի համար:
12. Նշեք այն արդյունավետ պայմանները, որոնք առաջանում են ուսումնական գործընթացում համակարգչի կիրառման շնորհիվ:
13. Նշեք այն հիմնական բաղադրիչները, որոնք որպես կանոն անհրաժեշտ է հաշվի առնել համակարգչային ուսուցողական ծրագրերի ստեղծման և կիրառման ժամանակ:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**Աստվածատրյան Մ. և համահեղ.** Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուս. ձեռնարկ.- Երևան.- «Ասողիկ».- 2004.-232 էջ:

**Դասապրոցեսում տեխնոլոգիաների ներդրման հիմունքները** //Ուղեցույց ուսուցիչներին օնլայն ծրագրեր իրականացնելու համար.-Երևան.-2003.-20 էջ:

**Հարությունյան Ա.** Հայաստանի հանրակրթական դրպրոցներում կառավարումը նոր մեթոդներով ու ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաներով իրականացնելու հրատապությունը.- Ակնարկներ ամերիկյան դպրոցի մասին, հայ տնօրենների տպավորությունները և մտորումները.-Ձեռնարկ.-Երևան.- «Յունիպրինտ».-2003.-էջ 45-47:

**Ստեփանյան Ա.Գ.** Համակարգչային տեխնիկայի կիրառման հնարավորությունները ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայում //Կանթեղ.-Եր.: «Ասողիկ».- 2006.-2 {27}.- էջ 228-235

**Андреев А.А.** Педагогическая модель компьютерной сети //Педагогическая информатика.-1995.- N2.-с.75-78.

**Беспалько В.П.** Педагогика и прогрессивные технологии обучения.- М.: Педагогика.-1995.-206 ст.

**Полевщиков М.М., Роженцов В.В.** Некоторые аспекты использования информационных технологий в физкультурном образовании.-Материалы VII межд. науч. конгресса.-М.:-2003.-т.III с. 328-329.

**Роберт И.В.** Распределенное изучение информационных и коммуникационных технологий в общеобразовательных предметах //Информатика и образование.-2001.- N5.-с.67-69.

## ԳԼՈՒԽ 5.

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

#### *5.1. Մանկավարժական գործունեության էությունը*

Մանկավարժությունում և հոգեբանությունում ընդունված է համարել, որ գործունեությունը մարդու ակտիվ վերաբերմունքի արտահայտության ձևն է շրջակա իրականության նկատմամբ: Որևէ գործունեության իրագործման համար պետք են կոնկրետ դրդիչներ, այսինքն զբաղվել սիրած գործով, օրինակ, դառնալ մանկավարժ, բժիշկ, ծրագրավորող և այլն:

Գործունեության ձևերից մեկն է հանդիսանում *մանկավարժական գործունեությունը*, ուղղված աճող սերնդի նախապատրաստմանը կյանքին:

Մանկավարժական գործունեությունը երկրագնդի վրա ամենահիմներից մեկն է: Դեռևս Քրիստոսի ծննդից առաջ Հիմ Յունաստանում և Հռոմում գոյություն ունեին ուսումնական հաստատություններ, որոնցում գլխավոր գործող անձանց թվին էին պատկանում ուսուցիչները, դրանց թվում նաև մարմնամարզության (ֆիզիկական կուլտուրայի): Ու թեև այն ժամանակից արմատապես փոխվել են կրթության ինչպես կազմակերպումը, այնպես էլ կրթության բովանդակությունը, մեր օրերում ուսուցչի կերպարը միշտ զուգորդվում է բարությանը, ուշադրությանը, ջերմությանը և հոգատարությանը:

Դաստիարակությունն ու մանկավարժական գործունեությունը և միասնական են, և հակադիր: Դաստիարակությունը օբյեկտիվ օրինաչափ գործընթաց է, այն ստեղծվել է պատմականորեն: Մանկավարժական գործընթացը իր էությամբ դաստիարակության գործընթացի արտացոլումն է:

Հետաքրքիր է դիտարկել ընդհանուր ու առանձնահատուկը դաստիարակությունում և մանկավարժական գործու-

նեությունում: *Առաջինը*՝ դաստիարակությունը հնագույն երևույթ է, գոյացել է մարդկության գոյացման հետ և գիտակցական գործունեությունից առաջ: Այսպես, նախնադարյան հասարակությունում երեխաներին դաստիարակում էին մարդիկ, ուժքեր, բնականաբար, մանկավարժական կրթություն չունեին: Մանկավարժական գործունեությունը ծնվեց դաստիարակչական հարաբերությունների ընդերքում, որպես օբյեկտիվ գործընթացների սուբյեկտիվ անդրադարձը, որպես աճող սերնդի ձևավորմանը գիտակից միջամտություն: Ահա թե ինչու դաստիարակությունը ավելի լայն և օբյեկտիվ կատեգորիա է, քան մանկավարժական գործունեությունը:

*Երկրորդ*՝ եթե դաստիարակությունը նպատակ ունի պատրաստել արտադրական ուժեր, ապա մանկավարժական գործունեությունը, բացի դրանից, դնում է անհատի և անհատականության որոշակի տեսակի ձևավորման խնդիր:

*Երրորդ*՝ դաստիարակությանը մասնակցում են բոլորը. և՛ մեծահասակները, և՛ երեխաները, իրերն ու երևույթները, միջավայրն ու բնությունը: Իսկ մանկավարժական գործունեությունը ֆոկլուսավորվում է միայն ի դեմս ուսուցչի, մանկավարժի:

*Չորրորդ*՝ դաստիարակությունը կոչված է բավարարելու մարդկանց հասարակական կյանքի պահանջմունքները: Իսկ մանկավարժական գործունեությունը հետապնդում է մարդկանց մոտ որոշակի աշխարհայացք, վարքի ձևեր, անձնական որակներ ձևավորելու նպատակ:

*Հինգերորդ*, հասարակական հարաբերությունների կատարելագործման հետ մեկտեղ տեղի է ունենում դաստիարակության և մանկավարժական գործունեության մերձեցում: Ընդլայնվում է մանկավարժական գործունեության գիտակից մասնակիցների շրջանը, ուսուցիչներից բացի այդ գործընթացին ներգրավվում են նաև ծնողները, դպրոցների ղեկավարությունը, հովանավորներ:

Ցանկացած մանկավարժական նպատակ սկզբունքորեն հանդիսանում է մանուկ անհատի դաստիարակությունը, նրա էական ուժերի զարգացումը ձևավորման բոլոր փուլերում:

Մանկավարժական գործունեության խնդիր է հանդիսանում մարդու ներդաշնակ զարգացման համար պայմանների ստեղծումը, աճող սերնդի նախապատրաստումը աշխատանքին և հասարակական կյանքին մասնակցության մյուս ձևերին:

Ուստի, կարելի է եզրակացնել, որ մանկավարժական գործունեությունը ուսուցման և դաստիարակման երկմիասնական գործընթաց է. դաստիարակող ուսուցում և ուսուցանող դաստիարակում: Հենց այստեղից էլ բխում են մանկավարժական գործունեության ֆունկցիաները՝ դաստիարակչական և ուսուցողական:

Մանկավարժական գործունեությունը որպես դաստիարակչական գործընթացի օրգանական, գիտակցական և նպատակաուղղված մաս, հանդիսանում է տվյալ երկրի կարևորագույն ֆունկցիան: Որպես հասարակական կյանքի երևույթ մանկավարժական գործունեությունը կապված է պետության գաղափարաբանական հիմքին, այսինքն ի՞նչ սովորեցնել, ո՞ր առարկաները դասավանդել և այլն:

Մանկավարժական գործունեությունը կապված է նաև լեզվի հետ: Լեզուն մանկավարժական գործունեության հիմնական զենքն է, նրա օգնությամբ է իրականացվում մանկավարժական ներգործությունը և մանկավարժական հաղորդակցումը: Մանկավարժական գործունեության հիմքում դրված են ուսուցչի անձնական որակների, մանկավարժական և հատուկ գիտելիքների և հմտությունների ամբողջությունը: Այս տեսակետից մանկավարժությունում տարբերակում են մանկավարժական գործունեության հետևյալ տեսակները:

- **Դիսզնոստիկ**, որը կապված է աշակերտների ուսումնասիրության, նրանց զարգացման մակարդակի, կրթվածու-

թյան, առողջական վիճակի և այլնի հետ: Չի կարելի զբաղվել երեխաների ուսուցմամբ և դաստիարակմամբ, չորոշելով ֆիզիկական, մտավոր, ֆունկցիոնալ, հոգեկան զարգացվածության, ընտանեկան դաստիարակության պայմանների յուրահատկությունները: Դրա համար հարկ է, որ ուսուցիչը լինի դիտումակ, տիրապետի իր աշակերտների բոլոր որակների ու ընդունակությունների, հետաքրքրությունների ու հակումների, բնավորության և խառնվածքի ուսումնասիրման և դիագնոստիկայի մեթոդներին:

• ***Ուսուցչի կազմակերպչական գործունեությունը***

կապված է ուսուցման և դաստիարակման գործընթացում աշակերտների ներգրավման հետ: Այդ գործունեության կարևոր տարր է հանդիսանում ծրագրված աշխատանքին աշակերտներին ոգեշնչելու կարողությունը, իրակացնել դրա կատարման նկատմամբ մարտավարական հսկողությունը: Այստեղ բնորոշ գծերն են հանդիսանում նաև երեխաների արարմունքներին ճիշտ արձագանքելու հմտությունը, լինել պահանջկոտ, շփումների ժամանակ հետևել հոգեբանական տակտին, կարողանալ տեսնել թերությունները, հետևություններ և ընդհանրացումներ անել և այլն:

• ***Տեղեկատվական-բացատրական գործունեություն:***

Հայտնի է, որ ուսուցումը մեծապես հիմնված է տեղեկատվական գործընթացների վրա: Այդ պատճառով էլ ուսուցիչը հանդես է գալիս ոչ միայն որպես ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպիչ, այլև որպես գիտական, աշխարհայացքային, բարոյական, գեղագիտական տեղեկությունների աղբյուր: Հետևաբար նրան անհրաժեշտ են խորը և լայն գիտելիքներ, կոնկրետ ուսումնական նյութի տիրապետման կարողություն: Խորագիտակ ուսուցիչը պետք է իմանա նորագույն գիտական փաստերը, իրադարձությունները, կարողանա դյուրըմբռնելիորեն դրանք հասցնել աշակերտներին:

- **Չաղորդակցական գործունեություն:** Ուսուցչին ներկայացնում է աշակերտների հետ շփումների, հաղորդակցման տեսակետով, նրանց հետ դրական փոխհարաբերությունների ստեղծման բացառիկ բարձր պահանջներ: Յենց դա է կազմում ուսուցչի հաղորդակցական խթանիչ գործունեությունը: Այն իր մեջ ներառում է երեխաների հանդեպ սիրո, հոգեկան վերաբերմունքի, ջերմության, նրբազգացուքան, նրանց նկատմամբ հոգատարության դրսևորումները: Կոպիտ և անհոգի ուսուցիչներին երեխաները, իհարկե, չեն սիրում:

- **Չետազոտական-ստեղծագործական գործունեություն:** Այս երկու կողմերն էլ էական նշանակություն ունեն յուրաքանչյուր ուսուցչի և մարզչի աշխատանքում: Մի կողմից նրանք երկուսն էլ միաժամանակ հետազոտողներ են, քանի որ յուրաքանչյուր դասարան կամ մարզական խումբ նրանց գիտական լաբորատորիան են: Մյուս կողմից ուսուցիչն ու մարզիչը պետք է ամփոփեն, վերլուծեն իրենց աշխատանքի արդյունքները, եզրահանգումներ և եզրակացություններ անեն:

## ***5.2. Ուսուցչի մասնագիտությունն ու մանկավարժական ընդունակությունները***

Աշխարհում գոյություն ունեցող ավելի քան 30 հազար մասնագիտությունների շարքում ուսուցչի մասնագիտությունը հատուկ տեղ է զբաղեցնում: Որքան ուսումնական առարկա է դասավանդվում, այնքան էլ ուսուցչական մասնագիտություն գոյություն ունի, օրինակ, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, մաթեմատիկայի, աշխարհագրության և այլն:

Բառի լայն իմաստով նրանց են անվանում ուսուցիչ, ովքեր մարդկանց զինում են գիտելիքներով, կարողություններով և հմտություններով: Նեղ իմաստով ուսուցիչը այն դեմքն է, որը ստացել է հատուկ մանկավարժական կրթություն, այդ թվում նաև բարձրագույն ֆիզկուլտուրային:

Ուսուցչական մասնագիտությունը աշխարհում հանդիսանում է հնագույններից մեկը: Խորը անցյալում ուսուցիչներ էին քուրմերը: Սակայն արդեն Յին Յունաստանում երևացին վարձու ուսուցիչներ: Միջնադարում ուսուցչի պարտականությունը կատարում էին վանականները: Աշխարհիկ քաղաքային դպրոցների գոյացմամբ երևան եկան ազնվակիր ուսուցիչներ:

Յետևաբար, ուսուցիչներ եղել են բոլոր ժամանակներում, նրանք միշտ էլ անցյալը կապել են ներկայի հետ: Ակամավոր ուսուցիչներ ունեցել են բոլոր ժողովուրդները:

Այսպես, չինացիների մեծագույն ուսուցիչն է եղել Կոնֆուցիս (մ.թ.ա. 6-5-րդ դար), չեխերինը՝ Յա.Կոմենսկին (1592-1670), որը գրել է 260 մանկավարժական ստեղծագործություն: Այսօր, երբ մենք ասում ենք դասարան, դաս, ուսուցում, արձակուրդ և այլն, ապա վկայակոչում ենք, որ դրանց հեղինակը եղել է Յա.Ա.Կոմենսկին: Սակայն մինչ Կոմենսկին, հայտնի է եղել Յովհաննես Սարկավազի (1045-1129) մանկավարժական երրորդությունը՝ դաս-դասացուցակ-դասարան: Մանկավարժական գիտությունը երախտապարտ է շվեդացի մանկավարժ Ի.Գ.Պեստալոցիին (1746-1827)՝ սկզբնական ուսուցման տեսության հեղինակին: Ռուսաստանի մեծ մանկավարժն էր Կ.Դ.Ուշինսկին (1824-1870)՝ «Յայրենի խոսք» դասագրքի, որը հրատարակվել է 167 անգամ, հեղինակը:

Մանկավարժությունում մեծ է նաև հայ մանկավարժների դերը: Այսպես, Անանիա Շիրակացին (605-690) իր ժամանակին հիմնադրեց ուսուցման մանկավարժական մի շարք սկզբունքները, Յովհաննես Սարկավազը՝ փորձի մեթոդը, Յովհաննես Երզնկացին (1250-1326) նշեց ուսուցման ընթացքում տարիքասեռային առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտությունը, Գրիգոր Տաթևացին (1346-1409) առաջարկում էր դաստիարակման գործընթացում հաշվի առնել միջավայրի և ժառանգականության գործոնների ազդեցու-

թյունը, Հովհաննես Որոտնեցին (1313-1388) առաջին անգամ մտքրեց թեստավորումը, գործնական պարապմունքները և քննությունները:

Հայկական մանկավարժական մտքի մեջ անգնահատելի արժանիքներ ունեն նաև Խաչատուր Աբովյանը (1809-1848), Հարություն Ալամդարյանը (1795-1834), Ղազարոս Աղայանը (1840-1911), Վահան Չերազը (1886-1929) և այլոք:

Ինչպես միշտ, այսօր էլ ուսուցչի մասնագիտությունը ամենամարդասիրականն է, տարածվածն ու սիրվածը: Իզուր չեն ուսուցչին նվիրվում երգեր, գրքեր, տոնախմբություններ: Աշխարհում աշխատող ուսուցիչների քանակը նկատելիորեն մեծ է, քան բժիշկներինն ու ճարտարագետներինը: Օրինակ, 25 աշակերտին հասնում է մեկ ուսուցիչ: Պատահական չէ, որ ուսուցչի մասնագիտությունը համեմատում են այգեպանի հետ, որն աճեցնում է ծաղիկներ, ճարտարապետի հետ, որը խելացիորեն տներ է կառուցում, զորավարի հետ, որը մարտի է տանում, պաշտպանելով Հայրենիքը:

Իսկական ուսուցչին, իր գործի Վարպետին շատ դյուրին է ճանաչելը: Եթե մանկապարտեզի սանը չի ցանկանում տուն գնալ, երբ դպրոցականը առավոտ շուտ շտապում է դպրոց և շարունակում ուսումնական հրապուրիչ պարապմունքները մենք համարձակ կարող ենք ասել, որ այստեղ «մեղավորը» մանկավարժական Արվեստն է և Վարպետ-Ուսուցիչը:

Մանկավարժական ամենակատարյալ գաղափարը, նախագիծը, սկզբունքները, ծրագրերն ու չափորոշիչները չեն կարող կյանքի կոչվել ինքնուրույնաբար, առանց ուսուցչի համապատասխան ստեղծագործական ճիգերի:

Վերջապես, ցանկացած ուսուցչի առավել կարևոր որակներն են հանդիսանում.

- սերը մասնագիտության և հարգանքը երեխայի նկատմամբ,

- մանկավարժական նրբազգացությունը, տակտը, չափի զգացումը,

- հեղինակություն վաստակելու ընդունակությունը:

Այստեղ էլ մոտեցումը ուսուցչի մասնագիտությանը պետք է լինի կոշտ, իսկ ընտրությունը՝ մանրազնին: Ըստ որում գերակայությունը պետք է տրվի ոչ այնքան բանականությանը, որքան բարոյական ներուժին: Եթե բժշկի սխալը հիվանդի մահն է, ապա ուսուցչի սխալը անսահման է և այդ սխալները փոխանցվում են սերնդեսերունդ:

Յուրաքանչյուր մանկավարժ՝ ուսուցիչ թե մարզիչ, պետք է տիրապետի հատուկ ընդունակությունների, որոնք անվանվում են **մանկավարժական**: Մանկավարժական ընդունակությունները մյուս զանազան ընդունակությունների կողքին՝ երաժշտական, մաթեմատիկական, իրավագիտական և այլն, զբաղեցնում է հատուկ տեղ:

Օրինակ, դպրոցական ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի համար և լաբորատորիայի գիտաշխատողի համար մանկավարժական ընդունակությունների պահանջները տարբեր են: Առաջինի համար կարևոր է սերը երեխաների նկատմամբ, դիդակտիկական սկզբունքների տիրապետման կարողությունը, մանկավարժական նրբազգացողությունն ու վարպետությունը և այլն, բաներ, որոնք բացարձակապես պարտադիր չէ երկրորդի համար:

Մանկավարժական ընդունակությունների առավել կարևոր հայտանիշները հետևյալներն են.

- ուսումնական նյութը մատչելի դարձնելու կարողություն,

- հետաքրքրությունը երեխաների նկատմամբ, նրանց հասկանալու ընդունակությունը, վերջինների հոգեբանության մեջ խորամուղ լինելը,

- աշակերտական դասարան, մարզական խումբ, կոլեկտիվ կազմակերպելու ընդունակությունը,

- դիտունակությունը, հաստատակամությունը և ինքնատիրապետումը,

- ուսումնական նյութը կյանքի, մասնագիտական պրակտիկայի հետ շաղկապելու ընդունակությունը,

- աշխատունակությունը և շարժումների կուլտուրան,

- նորի զգացողությունը ստեղծագործականը աշխատանքում, թեստավորման անցկացման կարողությունը,

- մանկավարժական, կամային ազդեցությունը աշակերտների վրա,

- խոսքի բովանդակալիությունը, պայծառությունն ու կուլտուրան, նրա համոզականությունն ու պատկերավորությունը,

- կազմակերպվածությունը, համեստությունը և նրբազգացողայնությունը:

Ընդ որում, դասավանդվող ուսումնական առարկաներից յուրաքանչյուրը, համաձայն իր առանձնահատկությունների, պահանջում է հատուկ մանկավարժական ընդունակությունների դրսևորում, ինչը հատկապես կարևոր է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի համար: Օրինակ, ի տարբերություն մյուս առարկաների դասատուների, ինչպես արդեն նշվել է, այստեղ պահանջվում է ֆիզիկական բեռնվածության հստակ չափավորում, անվտանգության ապահովում և վարժությունների կատարման ժամանակ ապահովագրում, հիգիենիկ պահանջների խիստ հետևում:

### ***5.3. Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից ուսուցիչն ու մարզիչը մանկավարժական համակարգում***

Ցանկացած մանկավարժական համակարգում նպատակները կյանքի են կոչվում մանկավարժական գործընթացում: Մանկավարժական գործընթացը տեղի է ունենում անհաշվելի մանկավարժական խնդիրների լուծման միջոցով:

Մանկավարժական համակարգի գործելը պետք է ապահովի ուսումնամարզական գործընթացի բնականոն ընթացքը դպրոցականների և պատանի մարզիկների ուսուցման և դաստիարակման ամբողջ համալիրի ակտիվ համագործակցությամբ:

Մանկավարժական գործընթացի կառավարման մասը իրացվում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մասնագիտական-մանկավարժական գործունեության մեջ:

Մանկավարժական համակարգի տարր մնալու համար ուսուցիչ-մարզիչը պետք է համապատասխանի նրան, այսինքն իր մասնագիտական կարողությունների ու հմտությունների մակարդակով, պետք է բավարարի որոշակի պահանջների:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի գործունեությունը, որպես օրենք, դիտարկում են շատ նեղ, առանձնացնելով նրա արտաքին կողմը, դասի կամ մարզումների կառավարումը: Սակայն նրանց գործունեությունը ունի բազմա-գործոն մանկավարժական բնույթ և իրագործվում է որոշակի մանկավարժական համակարգի շրջանակներում:

Ֆիզիկական կուլտուրայի (մարմնամարզության) ուսուցիչներ և մարզիչներ եղել են նաև անտիկ աշխարհում, նրանք կան նաև մեր ժամանակներում: Եվ անցյալում, և այսօր նրանք վարում են պետական ծառայություն: Դա հասկանալի է, քանի որ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով է սկսվում ֆիզիկական կատարելության, կամքի, վարպետության, անհատի ձևավորմանը տանող ճանապարհը:

«Ուսուցիչ» հասկացությունը արտահայտում է ոչ միայն ուսուցիչ-առարկայագետների, այլև տարբեր ֆակուլտատիվների ղեկավարների գործունեությունը. երաժշտական, պարավեստի, գեղարվեստի խմբակների, մանկապատանեկան մարզադպրոցների, այսինքն բոլոր նրանց, ովքեր սովորեցնում են երեխաներին, նրանց տալիս են գիտելիքներ, կարողություններ, հմտություններ կյանքի այս կամ այն բնագա-

վառներում: Ռուս հայտնի մաթեմատիկոս Մ.Վ.Օստրոգրադսկին գրել է, որ լավ ուսուցիչը դաստիարակում է լավ աշակերտներ: Դա հատկապես բնորոշ է մարզիչներին: Չայտնի են շատ օրինակներ, երբ ականավոր մարզիչները դաստիարակել են ոչ քիչ օլիմպիական չեմպիոնների, աշխարհի և Եվրոպայի ռեկորդակիրների:

Ուսուցիչ-մարզիչը հանդիսանում է սոցիալական դաստիարակչական միջավայրի կազմակերպիչ, յուրաքանչյուր պարապորդի հետ նրա փոխհամագործակցության կարգավորիչ և հսկիչ: Նա իրացնում է ուսուցման և դաստիարակման խնդիրները, կազմակերպում է աշակերտների և պատանի մարզիկների ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական գործունեությունը: Դա բարձր պահանջներ է ներկայացնում ուսուցիչ-մարզչի մասնագիտական գործունեությանը, կապված ֆիզիկական դաստիարակության և մարզական պատրաստության մասին գիտության զարգացման, տարբեր բնագավառներում գիտելիքների դիֆերենցվածության հետ (օլիմպիական կրթություն, զենդեքային գիտելիքների հիմունքներ, վալեոլոգիա, ադապտացված ֆիզիկական կուլտուրա և այլն): Այդ բոլորը ֆիզիկական կուլտուրայի ուսուցչից և մարզչից պահանջում են մեծ բանիմացություն և հարակից գիտությունների հատուկ բնագավառներին՝ անատոմիա, ֆիզիոլոգիա, չափագիտություն, հիգիենա և այլն, գործնականորեն նմանեցնելու կարողություն:

Այս կապակցությամբ ռուս մանկավարժ Ա.Ս.Մակարենկոն ասում էր, որ աշակերտները կներեն իրենց ուսուցիչներին խստության, չորության և անգամ մանրախնդրականության համար, բայց չեն ների իրենց գործի վատ իմացությունը: Ահա թե ինչու ուսուցիչ-մարզիչը պարտավոր է մշտապես բարձրացնել իր գիտագործնական որակավորումը, համալրել իր գիտելիքները, ընդլայնել շարժողական վարժվածությունը: Այս կապակցությամբ մտածողներից մեկը (E.Lowell) ասել է, որ

մարդը այնքան ծեր չի լինում, որպեսզի սովորի, սակայն ծերանում է, երբ դադարում է սովորել:

Մանկավարժության գործունեությունում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի մոտիվացիայի խնդիրը: Յույց է տրված, որ 27-30 տոկոսի դեպքում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մասնագիտության ընտրության գլխավոր մոտիվը՝ դրդապատճառը, հանդիսանում է հետաքրքրությունը ուսուցման առարկայի նկատմամբ, 19 տոկոսի մոտ՝ իրենց նվիրումը երեխաների դաստիարակմանը, 16 տոկոսը ցանկանում է երեխաներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի տարբեր մարզաձևերի հիմունքները: Այս տվյալները վկայում են անհատի մանկավարժական ուղղվածության մասին:

Ուսուցիչ-մարզիչը կազմակերպում է դասային, արտադասարանական կամ ինքնուրույն պարապմունքները, հաշվառում է հաճախությունը և առաջադիմությունը, ներդնում սովորողների շարժողական կատարելագործման առավել արդյունավետ միջոցներ ու մեթոդներ, հանրակրթական և մարզական դպրոցում ուսուցման ամբողջ ընթացքում ապահովում է երեխաների առողջական վիճակի, ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության հսկողությունը:

Ռուս հայտնի մանկավարժ Յու.Կ.Բաբանսկին ուսուցման ընթացքում առանձնացնում է մանկավարժի գործունեության մի շարք փուլեր. առաջինը՝ ուսուցման խնդիրների ձևակերպումը, երկրորդը՝ ուսուցման բովանդակության կոնկրետացումը, երրորդը՝ ուսուցման առավել նպատակահարմար մեթոդը, չորրորդը՝ ուսուցման ծրագրի իրացումը և հիմնգերողը՝ դրված խնդրի լավագույն լուծման վերլուծությունը:

Մարզական պրակտիկայի օրինակով դա այսպիսի տեսք կունենա: Ընդունենք, խնդիր է դրված սովորեցնել զցում արտակորված հնարքի տեխնիկան. սա առաջին փուլն է: Այնուհետև մարզիչը ընտրում է վարժությունների համապատասխան

խմբաքանակ. սա երկրորդ փուլն է: Դրանից հետո սահմանվում է վարժությունների կատարման առավել ընդունելի մեթոդը, սկզբնական փուլում՝ կրկնությունը, սա ուսուցման երրորդ փուլն է: Այնուհետև սկսվում է ընտրված միջոցների այլ կերպ ֆիզիկական վարժությունների գործնական կատարումը՝ ընդհանուր զարգացնող, մոտեցնող, հատուկ: Սա չորրորդ փուլն է, որը կարող է շարունակվել մեկ-երկու ամիս և պայմանավորված է բազմաթիվ գործոններով (սովորողների մոտիվացիայի աստիճանը, նախնական գիտելիքների և շարժողական փորձի առկայությունը, շարժողական պատրաստվածության մակարդակը և այլն): Պարապմունքների սահմանված ժամանակի ավարտին արդեն կարելի է տալ տվյալ հնարքի ուսուցման հաջողության վերլուծությունը: Սա, ըստ էության, ուսուցման ավարտական փուլն է:

Կարևոր է նշել, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքը համապատասխան է մարզչի աշխատանքին բոլոր մակարդակներում, ներառյալ ինչպես ուսումնական, այնպես էլ արտադպրոցական աշխատանքը: Դա արտահայտված է նրանով, որ.

- փաստացի նյութի տիրապետումը կախված է բացատրման պարզությունից և արտահայտչականությունից, պարապողներին ուսուցիչ-մարզչի կողմից նյութի մատուցման հնտությունից,

- աշակերտների կողմից նյութի հասկացությունը կախված է ուսուցիչ-մարզչի եռանդից և նյութի շարադրման նրա ձևից,

- դասարանում կամ մարզական խմբում բարյացկամ մթնոլորտը կախված է ուսուցիչ-մարզչի վարքից, որը պետք է չափավոր վերահսկի սովորողներին և նրանց գործողություններին տա որոշակի ազատություն:

Ուսուցիչ-մարզչի գիտելիքների կառուցվածքը կազմում են գաղափարական, հոգեբանամանկավարժական, բժշկակենսաբանական և հատուկ գիտելիքները:

Գաղափարական, հասարակական-քաղաքական գիտելիքները կազմում են ուսուցիչ-մարզչի աշխարհայացքի տեսական հիմքը, մասնագիտական և հատուկ գիտելիքների համար մեթոդաբանական բազա:

Հոգեբանամանկավարժական գիտելիքները որոշում են ուսուցիչ-մարզչի մասնագիտական պատրաստվածության էությունը: Բժշկակենսաբանական առարկաների իմացությունը կազմում է ուսուցիչ-մարզչի գիտելիքների կառուցվածքի առանձնահատկությունը: Այս ոլորտի գիտելիքները թույլ են տալիս նրան ֆիզիկական վարժություններով զրագետ ներգործելու դպրոցականների և պատանի մարզիկների օրգանիզմի տարբեր օրգանների ու համակարգերի վրա, հաշվի առնելով նրանց տարիքային և սեռական առանձնահատկությունները, առողջական վիճակը և պատրաստվածության մակարդակը:

Ուսուցիչ-մարզչին անհրաժեշտ են նաև հատուկ գիտելիքներ՝ ֆիզիկական դաստիարակության և սպորտային տարբեր առարկաների տեսություն և մեթոդիկա:

Երբեմն ուսուցիչ-մարզչի տեսական գիտելիքները փոքր-ինչ գերազանցում են մեթոդականներին: Սակայն գիտելիքներն իրենք իրենց դեռևս չեն որոշում մանկավարժական որակավորումը: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն ու մարզիչը պետք է դրանցից կարողանան օգտվել գործնականում: Ունակության որակն ու մակարդակը շատ բանով կախված է այն բանից, թե դրանք որ չափով են հիմնված գիտական տեսության պահանջների վրա: Իր առարկայի և հարակից առարկաների խորն իմացությունը, գործի մեջ դրանց հմուտ կիրառումը բնորոշ է ֆիզիկական դաստիարակության և սպորտային մանկավարժության վարպետներին:

Հարկ է նշել, որ մարզական մանկավարժության բնագավառում հայտնագործությունները ծնվում են բոլոր ժամանակակից գիտությունների՝ մաթեմատիկայի, ֆիզիոլոգիայի, գենետիկայի և այլ առարկաների հատման կետերում:

Ուսուցիչների պատրաստման պետական կրթական չափորոշիչներում տարբերակում են գիտելիքների երեք բլոկ: Առաջին՝ ընդհանուր մշակութային, նպատակ ունի ապահովել աշխարհայացքի ձևավորումը, ուսուցիչների կրթական ընդհանուր մակարդակի ընդլայնումը (դրան տրվում է ուսումնական ժամանակի 25 տոկոսը):

Երկրորդ՝ հոգեբանամանկավարժական բլոկ, հետապնդում է ուսուցչի մասնագիտական կրթության, մանկավարժական կարողությունների ձևավորման նպատակ (դրան հատկացվում է ուսման ժամանակի 18 տոկոսը):

Երրորդ բլոկը առարկայական է, նպատակ ունի կոնկրետ գիտելիքների յուրացում (դրան հատկացվում է ուսման ժամանակի 57 տոկոսը):

Ներկա ժամանակում տեղի է ունենում մանկավարժական մասնագիտության դիֆերենցում: Հայտնվել են այնպիսի նոր մանկավարժական մասնագիտություններ, ինչպիսիք են շտկողական մանկավարժությունը, ադապտացված ֆիզիկական կուլտուրան, առողջարարական ֆիզիկական կուլտուրան (կինեզիոլոգիա), մանկավարժական սպորտի մարզիչ:

## **ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

1.Նկարագրեք մանկավարժական գործունեության հինգ հիմնական կողմերը:

2.Որոնք են դաստիարակության ու մանկավարժական գործունեության նմանությունները և տարբերությունները:

3.Բացատրեք «մանկավարժական գործընթաց» հասկացության բովանդակությունը: Ինչով է այն տարբերվում «մանկավարժական գործունեություն» հասկացությունից:

4. Ինչ էք հասկանում մանկավարժական գործունեություն ասելով: Պատմեցեք այդ գործընթացի էության և բաղադրիչների մասին:

5. Ինչ է իրենից ներկայացնում մանկավարժական գործընթացը որպես համակարգ:

6. Ինչու է կրթությունը համարվում մանկավարժական գործունեության գործընթաց և նրա արդյունքը:

7. Որն է կրթության հայեցակարգը ժամանակակից Հայաստանում:

8. Ինչու է ուսուցչի և մարզիչի մասնագիտությունները համարվում ամենահինը: Նշեք հին ու նոր հայ անվանի մանկավարժներին:

9. Պարզաբանեք ուսուցիչ-մարզչի առավել կարևոր մանկավարժական որակները:

10. Ինչում է կայանում մանկավարժական վարպետության էությունը:

11. Բնութագրեք մանկավարժական ընդունակություններին բնորոշ տարրերն ու բաղադրիչները:

12. Ինչում էք տեսնում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզիչի մասնագիտությունների նմանությունը և տարբերությունը:

13. Նշեք մարդու մասին այն գիտությունները, որոնց գիտելիքներով պետք է զինված լինի ուսուցիչ-մարզիչը:

14. Որոնք են ուսուցչի և մարզիչի անձնային և պրոֆեսիոնալ որակները: Դրանցից մի քանիսի վերաբերյալ արտահայտեցեք ձեր դատողությունները:

15. Ինչում էք տեսնում պատճառները, որ վերջին տարիներում նկատվում է մեկ սպորտային մասնագիտության սահմաններում մարզչի մասնագիտության դիֆերենցում, օրինակ, կարճ վազքերի մարզիչ, երկար վազքերի մարզիչ և այլն:

16. Տվեք ձեր իմացած կարծիքները ուսուցչի և մարզիչի մասին: Ուսուցչին և մարզչին ներկայացվող պահանջներին ուրիշ ինչ կավելացնեք:

17. Փորձեք նկարագրել ժամանակակից ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մոդելը, պրոֆեսիոգիրը:

***Գրականություն ինքնուրույն ուսումնասիրության համար***

Մանկավարժություն. Յու. Բաբանսկու խմբ.-Երևան.-Լույս.-1986.-1-2 մասեր

Բալյան Ա.Ա. Մանկավարժական վարպետության հիմունքները.-Երևան.-Լույս.-1988.-176 էջ

Ղազարյան Ֆ.Գ., Կուպալյան Յու.Ե. Սպորտային մարզման տեսություն.-Երևան.-Լույս.-1980.-133 էջ

Մախչանյան Յ.Ս. Մանկավարժական մտորումներ.-Երևան.-ԵՊՀ.-1991.-121 էջ

Մանուկյան Ա.Ս., Մանուկյան Մ.Ս. Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա.-Երևան.-Չանգակ.-2000.-131 էջ

Մանուկյան Ս.Պ. Մանկավարժագիտություն.-Երևան.-Չանգակ.-2002.-512 էջ

Մախչանյան Յ.Ս., Մանուկյան Ա.Ս. Մանկավարժության ընդհանուր հիմունքները.-Երևան.-ԵՊՀ.-1997.-220 էջ

Սուխոմլինսկի Վ. Չարյուր խորհուրդ ուսուցչին.-Երևան.-1980-1981.-մաս I-II

Белорусова В.В. Педагогика.-М.: ФУС.-1986.-228 с.

Деркач А.А., Исаев А.А. Педагогическое мастерство тренера.-М.: ФУС.-1981.-375 с.

Казарян Ф.Г. О сущности тренерской профессии.- Материалы 33 НМК.-Ереван.-2006.-с. 234-236

Кукушин В.С. Введение в педагогическую деятельность.-Ростов-на-Дону.-Марм.-2002.-224 с.

Ханин Ю.А. Общение в спорте.-М.: ФУС.-1980.-224 с.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>3</b>
<b>ԳԼՈՒԽ 1</b> .....	<b>6</b>
<b>ԴԻՂԱԿՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>6</b>
1.1. Մանկավարժության մասին .....	6
1.2. Ինչ է դիդակտիկան .....	9
1.3. Ուսուցման մեթոդական հիմունքները .....	19
1.3.1. Ուսուցման օրինաչափությունները .....	19
1.3.2. Ուսուցման սկզբունքները .....	22
1.3.3. Ուսուցման մեթոդները .....	27
1.3.4. Ուսուցման դիագնոստիկա .....	31
<b>ԳԼՈՒԽ 2</b> .....	<b>36</b>
<b>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԻՂԱԿՏԻԿԱՅԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ</b> .....	<b>36</b>
2.1. Ակունքները .....	36
2.2. Սպորտային պատրաստության դիդակտիկայի առանձնահատկությունները .....	39
<b>ԳԼՈՒԽ 3</b> .....	<b>56</b>
<b>ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՈՒՄ</b> .....	<b>56</b>
3.1. Դիդակտիկական համակարգերի վերլուծություն .....	56
3.2. Ինովացիաները մանկավարժությունում: Մանկավարժական տեխնոլոգիաներ .....	59

3.3. Ինովացիոն տեխնոլոգիաները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության համակարգում .....	67
3.3.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ուսումնական գործընթացում .....	67
3.3.2. Ինովացիոն ուղղությունները ֆիզկուլտուրային բարձրագույն կրթությունում .....	70
<b>ԳԼՈՒԽ 4.....</b>	<b>79</b>
<b>ՀԱՄԱՎԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....</b>	<b>79</b>
4.1 Համակարգչային տեխնիկայի կիրառման առանձնահատկությունները ուսումնական գործընթացում .....	79
4.2 Համակարգչային տեխնիկայի կիրառման հնարավորությունները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ուսուցման գործընթացում .....	86
<b>ԳԼՈՒԽ 5.....</b>	<b>93</b>
<b>ՄԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>93</b>
5.1. Մանկավարժական գործունեության էությունը .....	93
5.2. Ուսուցչի մասնագիտությունն ու մանկավարժական ընդունակությունները.....	97
5.3. Ֆիզիկական կուլտուրայի ժամանակակից ուսուցիչն ու մարզիչը մանկավարժական համակարգում .....	101
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>110</b>

**Ֆ.Գ.ՂԱԶԱՐՅԱՆ՝**

ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԴԻՊԿՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

*ռատմական ձեռնարկ*

**Փ.Դ.ԿԱՅԱՐԻԱՆ –**

заслуженный деятель физической культуры и спорта Республики Армения, доктор педагогических наук, профессор

**ОСНОВЫ ДИДАКТИКИ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ И СПОРТИВНОЙ ПОДГОТОВКИ: учебное пособие**

*Խմբագիր՝*

Յու.Գ.Գրիգորյան

*Տեխ. խմբագիր՝*

Ս.Գ.Գալստյան

*Համակարգչային*

*ձևավորումը՝*

Լ.Ա.Մեծոյանի

Ստորագրված է տպագրության 12.02.2009 թ.

Չափը՝ 60x84, 1/16: Տպագրությունը՝ օֆսեթ

7 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 150

Տպագրված է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի տպարանում

